№ 114 ՇԱԲԱԹ, 29 ՄԱՅԻՍԻ

1910

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 29 ՄԱՅԻՍԻ. № 114

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելէֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով.
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Խմբագրատան տելէֆօն № 253

ՄՇԱԿ

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction «MSCHAK».

ՅՈՒՆԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 6 ՐՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ր., 6 և 7 ամսվ. 6 ր., ամսակ. 1 ր. Ամերիկա՝ տարեկան 6 դոլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ր., Թիւրքիա՝ 120 ղրուշ։ Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամակադրոշմով)։

Յայտարարութիւնների համար վճարում են. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.։ Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и Ко" ֆիրմայի միջոցով Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՐԻՍԵԱՆՆԵՐԻ ընտանիքը յայտնում է բարեկամներին և ծանօթներին, որ կիրակի, մայիսի 30-ին, Խօջիվանքի գերեզմանատան եկեղեցում կատարվելու է ՊԱՏԱՐԱԳ և ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ու ԴՆՎԵԼՈՒ Է ԱՐՁԱՆ Բալախանում 1909 թ. մայիսի 26-ին չարագործների ձեռքով սպանված՝ Միրզոյեանների նաւթային գործարանների կառավարիչ

ԻՆԺԵՆԵՐ-ՏԵԽՆՈԼՈԳ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ
ԲՈՐԻՍԵԱՆՑԻ

գերեզմանի վրա։ Պատարագի սկիզբը առաւօտեան ժամը 10½-ին, իսկ հոգեհանգիստը՝ հանգուցեալի գերեզմանի վրա՝ ժամը 12½-ին։
650. 2—1

Կովկասի Հայոց Դպրոցների Ուսուցչական Միութեան Կենտրոնական Վարչութիւնը խորին վշտով ծանուցանում է Միութեան անդամ

ՌՈՒԲԷՆ ՄԵԼԻՔ-ՄՈՒՍԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ՝ իր հայրենի Ագուլիս աւանում։

Հոգեհանգիստը՝ այսօր, առաւօտեան ժամը 11-ին Զգրաշէնի եկեղեցում։
649. 1—1

Մարիամեան-Յովնանեան Օրիորդաց Դպրոցի Հոգաբարձութիւնն ու Ուսուցչական խումբը խորին վշտով յայտնում են դպրոցի ուսուցիչ

Ռուբէն ՄԵԼԻՔ-ՄՈՒՍԵԱՆԻ

վաղաժամ մահը։ Թաղումը կատարվեց ամսիս 25-ին Վերին Ագուլիսում։ Այսօր, շաբաթ, ամսիս 29-ի առաւօտեան, ս. պատարագից յետոյ, ճիշդ ժամը 11-ին Զգրաշէնի ս. Աւետեաց եկեղեցում կատարվելու է հոգեհանգիստ, որի համար յայտնվում է ի գիտութիւն հանգուցեալին յարգող ուսուցիչների, վարժուհիների, բարեկամների և ծանօթների։
639. 1—1

Այսօր, մայիսի 29-ին, երեկոյեան ժամը 7-ին
ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ
Նշանակված է
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Ընթացիկ հարցն է՝ ընտրութիւններ վարչութեան անդամների և փոխանդամների։
(առ.) 645. 1—1

Թիֆլիսի Ժողովարան
ԱՄԱՌԱՅԻՆ ՇԻՆՈՒԹԻՒՆ
Այսօր, շաբաթ, մայիսի 29-ին
տեղի կունենայ
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ
Երեկոյթին կը նուագէ սիմֆօնիական երաժշտախումբը Ս. Ի. Պրէսմանի ղեկավարութեամբ։
Հիւրերը՝ անդամների յանձնարարութեամբ՝ մուտքի համար վճարում են—տղամարդիկ 1 ր., կանայք 50 կ.։
Համերգի սկիզբը երեկ. ժամը 9-ին։
(ա.) 636. 1—1

ՊԱՍՏԱՌՆԵՐ
(ОБОИ)
ԵՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼ
ՖԱԲՐԻԿԱՅԻ
8 կ. սկսած մինչև 6 ր. իւրաքանչիւր փաթեթը (րուլօ)։
Ունի պահեստներ Ռուսաստանի բոլոր մեծ քաղաքներում։
ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ
Գօլովինսկի պր., 21, Արտիստ. Ընկ. շինութ.
Տէլէֆօն № 355.
ԳՆԵՐԸ ՖԱԲՐԻԿԱՅԻՆ
ՆՄՈՒՇՆԵՐԸ ՁՐԻ
(հ.շ.) (ա.) 310. 50—20

ԲԺՇԿԱՊԵՏ
ԱՒԵՏ. ԲԱԲԱՅԵԱՆԸ
ըստ սովորականին, յունիսի 1-ից մինչև սեպտ. 15-ը հիւանդներ ընդունելու է ԿԻՍԼՈՎՈԴՍԿՈՒՄ (Отель Бештау)։
(հ.կ.) առ. 611. 10—3

ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ

Երկու նպատակ է դրված ընտրողների առաջ—կազմել հոգաբարձութիւն Ներսիսեան դպրոցի համար և թեմական խորհուրդ Թիֆլիսի թեմի համար։

Երկուսն էլ պատկառելի և պատասխանատու նպատակներ։

Առաջին նպատակը պարզ է ըստ իր էութեան, բայց բարդ իրական գործադրութեան մէջ։

Երկրորդը դեռ լիովին որոշ չէ ըստ իր ծրագրի և իրաւասութեան, բայց շօշափում է ամբողջ թեմի դպրոցական գործը, որտեղ շատ կան կնճռոտ ու պատասխանատու խնդիրներ։

Ահա մեր ընտրութիւնները պէտք է ուղղված լինեն դէպի մի կենտրոնական հոգս—տալու թէ հոգաբարձութեան և թէ թեմական խորհրդի համար այնպիսի անձեր, որոնք ձեռնհաս. լինէին ղեկավարելու դպրոցի բարեկարգութեան գործը և կեանք, բովանդակութիւն ու իրական ձևակերպութիւն տային թեմական խորհրդի իրական գործունէութեան։

Մեր յօդուածներից մէկում մենք յիշատակեցինք թեմական դպրոցի գործօնների առաջ դրված խոշոր հարցերի մասին։ Այդ հարցերը պահանջում են բարեխիղճ վերաբերմունք դէպի իրանց ուսումնասիրութեան և մշակութեան գործը։ Այդ հարցերը մանաւանդ այժմ ստացել են առանձին կարևորութիւն, որովհետև հերթական են դարձել դպրոցի վերջնական կազմակերպութեան և կանոնադրութեան հաստատման խնդիրները։

Եւ դպրոցական հոգաբարձութեանը վերապահված է նախանձելի դեր՝ արտայայտիչ հանդիսանալ այն իղձերի, որ սնուցել է հայ ժողովուրդը իր թեմական դպրոցների վերաբերութեամբ, յոյս ունենալով ստանալ այդ դպրոցներից կրթված զաւակներ, պատրաստված ուսուցչացուներ և մտաւոր մշակներ, որոնք մեր կուլտուրական կեանքի մէջ ներկայացնեն իբրև յարատև գործողներ ժողովրդական ընդարձակ խաւերի շրջաններում։

Իսկ թեմական խորհո՞ւրդը։

Իր գաղափարով նա գրաւիչ և ընդարձակ մի հաստատութիւն է, իր իրաւական կերտուածքով նա դիմազուրկ մի մարմին է առ այժմ, որը չէ կարողացել որոշել իր դիրքը եղած իրաւական մարմինների մէջ։

Եւ ահա՝ թեմական խորհրդի գործողների վրա ծանրանում է միշտ փափկանկատ պարտաւորութիւն—մշակել, պատրաստել և ընձեռել իրական նիւթեր, գործի էութեան ծառայող խորհրդածութիւններ և իրաւաբանական ձևակերպութիւններ՝ ստեղծելու նոր կենսունակ մի մարմին որոշ իր ֆունկցիաներով և որոշ յարաբերութեամբ միւս կենսական և իրաւական մարմինների հետ։

Գործ է պահանջվում, գործ, հիմնված լուրջ մտածողութեան և լուրջ աշխատանքի վրա։

Եւ այդ գործի աջող իրականացման համար ձեռնհաս անձնաւորութիւններ են պահանջվում։

Կը նպաստե՞ն արդեօք վաղվայ ընտրութիւնները լուրջ նպատակներ իրագործելու։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 26 մայիսի

Կայսրը և Կայսրուհին Գահաժառանգի և Օգոստափառ Աղջիկների հետ տեղափոխվեցին ապրելու Նոր-Պետերհօֆ՝ Նորին Մեծութեան Սեփական «Ալէքսանդրիա» ամարանոցում։ (Հ. Գ.)

Վիեննա, 26 մայիսի

Չեխ արմատականների պարլամենտական կլուբը ուղերձ է ուղարկում Պետական Դումային, խորհուրդ տալով պատասխանել Ֆինլանդիայի հարցի առիթով գերմանական և սօցիալ-դեմօկրատիական կուսակցութիւնների ուղերձներին՝ հրաւիրելով յիշեալ կուսակցութիւններին ամենից առաջ աջակցել չեխական պետական իրաւունքի իրականացման։

Պատգամաւորների պալատ։ Մինիստր-նախագահը ասաց, որ ունգարական ընտրութիւններին աւստրիական զօրքեր հանդէս բերելը միանգամայն օրինական է, քանի որ այդպէս էր պահանջում պետութեան ներքին կարգուկանոնը։ (Հ. Գ.)

Լօնդօն, 27 մայիսի

Լօրդերի և համայնքների պալատները գումարվեցին ամառային արձակուրդից յետոյ։ Համայնքների պալատը քննեց ծովային նախահաշւի գանազան կէտերը։ Լօրդերի պալատը քննեց Րօզբէրիի բանաձևի ներկայացման ժամանակի հարցը վերին պալատի բարենորոգման մասին։ Րօզբէրին յայտնեց, որ ոչ մի առնչութիւն չէ տեսնում իր և կառավարական բանաձևների միջև veto-ի վերաբերութեամբ. սակայն ցանկանալով խուսափել երկպառակութեան առիթից, մտադիր է ներկայացնել նրանց նորից, երբ դա յարմար կը լինի։ (Հ. Գ.)

Փարիզ, 27 մայիսի

Պատգամաւորների պալատ։ Նոր նախագահ Բրիասօնը ճառ արտասանեց և յոյս յայտնեց, որ նոր օրէնսդրական շրջանում կիրագործվեն սօցիալական բարենորոգումները։ Բրիանը յետոյ կարդաց մինիստրական դեկլարացիան և, մատնանշելով ընտրութիւնների հետևանքների վրա, ողջունեց այն անկախութիւնը և արժանապատուութիւնը, որ ցոյց տուեց երկիրը։ Ընտրութիւնները ապացուցեցին, որ հանրապետական հաստատութիւնների հակառակորդները երկպառակութեան և անհնազանդութեան սերմեր են սերմանում պետական ծառայողների մէջ։ (Հ. Գ.)

Փարիզ, 27 մայիսի

Հիւսիսային էլեքտրաքարշի գծերի վրա այսօր ոչ մի վագօն չէր երթևեկում։ (Հ. Գ.)

Վաշինգտօն, 26 մայիսի

Ներկայացուցիչների պալատը որոշեց, որ երկաթուղիների օրինագիծը պէտք է ենթարկվի ընդհանուր պալատի և սենատի քննութեան։ (Հ. Գ.)

Հռոմ, 26 մայիսի

«Տրիբունա» լրագիրը տեղեկութիւն ստացաւ Կալիարից, որ Սարդինիայում ցիկլօնը ամայացրել է դաշտերը, սպանել է բազմաթիւ անասուններ։ Երկիւղ են կրում, թէ հովիւները սպանվել են։ Շատ համայնքներ խիստ վնասվեցին։ (Հ. Գ.)

Ավելինօ, 26 մայիսի

Նաւերի մի խումբ դիմեց երկրաշարժից վնասված տեղերը՝ օգնութեան համար։ Սունֆէլում փլված տան տակ մնացին վեց մարդ։ Կալիտրիայում Թագաւորը և Թագուհին ներկայ եղան ազատարար աշխատանքներին։ (Հ. Գ.)

Հռոմ, 27 մայիսի

Թագաւորը 50,000 լիր նուիրեց Աւելինօյի և Պօտենցի երկրաշարժից վնասվածների օգտին։ (Հ. Գ.)

Հաագա, 27 մայիսի

39 պետութիւններ ցանկութիւն յայտնեցին մասնակցել մուրհակային իրաւունքը միացնելու խնդրի խորհրդակցութեան համար գումարվող միջազգային կօնֆերենցիային, որի բացումը տեղի կունենայ յունիսի 10-ին։ (Հ. Գ.)

Բերլին, 24 մայիսի

Լանդտագի բիւջէտային մասնաժողովը միաձայն ընդունեց կայսրի յաւելեալ ռոճիկը։ (Հ. Գ.)

Վիեննա, 27 մայիսի

Պատգամաւորների պալատ։ Ունգարական ընտրութիւնների ժամանակ աւստրիական զօրքեր հանդէս բերելուն դէմ խօսեցին սլաւօնները, սօցիալ-դեմօկրատները և քրիստոնեայ սօցիալիստները։ (Հ. Գ.)

Լօրէնցօ-Մարկէզ, 26 մայիսի

Մի նաւի խորտակման ժամանակ խեղդվեցին 32 մարդ։ (Հ. Գ.)

Ֆրիդրիխսհաֆէն, 26 մայիսի

Ցեպպելինը ժամանակաւորապէս հրաժարվեց թռիչք կատարելուց դէպի Վիեննա և Դրեզդէն։ (Հ. Գ.)

Պետերբուրգ.—Արժանահաւատ աղբիւրից հաղորդում են, որ Պարսկաստանը դիմել է Ռուսաստանին խնդրելով հաշւել այն պարտքը, որ վճարել է Պարսկաստանը Ռուսաստանին։ Այս դիմումը կապում են այն բանի հետ, որ մի երրորդ մեծ պետութիւն խոստացել է փոխարինաբար դրամ տալ Պարսկաստանին։ Դիպլօմատիական շրջաններում Պարսկաստանի այդ քայլին նշանակութիւն չեն տալիս։

Արևմտեան երկրում զինուոր մտցնելու օրինագիծը քննող մասնաժողովը որոշեց չընդունել հրէաներին իբրև կամաւոր ծառայողներ. Տօմաշէվիչի ուղղումը այն մասին, որ բացառութիւն լինի բժիշկների և դեղագործների համար, մերժվեց։

Դաւանաբանական մասնաժողովը որոշեց թոյլ չը տալ քրիստոնէութիւնից անցնել այլակրօնութեան։ («Б.»)

Բելգրադ.—Գէօրգի գահաժառանգը հարց բարձրացրեց գահից հրաժարվելու մասին։ («Б.»)

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Կ. Պոլիս, 26 մայիսի

Նաւահանգիստների մեծ մասում բոյկոտ յայտարարվեց յոյների դէմ։ «Թանինը» դարձեալ պահանջում է արտաքսել յունահպատակներին։ (Հ. Գ.)

Սալօնիկ, 26 մայիսի

Յունական հրոսակախմբի պարագլուխ Դանգան և 14 համախոհներ բերվել են այստեղ և յանձնվելու են պատերազմական դատարանին։

Կարծում են, որ շուտով բոյկոտ կը յայտարարվի յունական ապրանքների դէմ։ Բոյկոտին հակառակում են միայն հրէայ նաւատէրերը։ Հասարակական աշխատանքների մինիստրի կարգադրութեամբ արգելվում է պօստատներում ընդունել յունաց նամականի։

Զինուորական մինիստր Մահմուդ Շէվքէթ փաշան յայտնեց, որ իր միսիան աւարտված համարելով նա վերադառնում է։ Ապստամբութիւնը ճնշված է, ազգաբնակութիւնը զինաթափ է լինվում լիակատար կարգով, սակայն ալբանական արշաւանքը դեռ վերջացած չէ. մնում է գրաւել Դրինա գետի արևմտեան շրջանը, որ դեռ թշնամի է կառավարութեանը։ Կարգ ու կանոնը վերականգնելուց յետոյ զօրքերը կը գրաւեն և զինաթափ կանեն ամբողջ Ալբանիան, նոյնիսկ Մալէսիան։ Կառավարութիւնը հաստատ կարգ է մտցնում զօրքի օգնութեամբ. հաստատվելու են ժանդարմների և պահակների խմբեր։ Ճանապարհներ բանալու համար յատկացվելու է 110 հազար թիւրքական ֆունտ։ Զինուորական դրութիւնը կը մնայ մինչև լիակատար խաղաղութիւն հաստատվելը։

Զինուորական մինիստրը ռուսական շոգենաւով մեկնեց Կ. Պոլիս։

Սալօնիկի վալին մեկնեց Աֆօն, ուր տեղի է ունեցել զինված ընդհարում յոյն վանականների միջև. ընդհարման ժամանակ սպանվել են 2, վիրաւորվել են 16 հոգի։ Բուլղարական մի հրոսակախումբ ընդհարում է ունեցել Րախօվիցա գիւղում ժանդարմների հետ։ (Հ. Գ.)

Դիակօվօ, 26 մայիսի

Սկսվեց պիտանի զէնքերի յանձնումը։ Խլվել են 1500 հրացան, դարձեալ խլվելու են 5000 հատ։

Բէկ գնացած զօրամասը հրդեհել է ալբանական մի քանի գիւղեր։ (Հ. Գ.)

Սէրաէվօ, 26 մայիսի

Քաղաքապետ Իւլովիչը և մահմեդական համայնական խորհուրդները հրաժարական տուեցին, որովհետև նրանց կուսակցութիւնը լիակատար պարտութիւն կրեց շրջանային սէյմի ընտրութիւններին մահմեդական ազգային օպպօզիցիայի յաղթութեան պատճառով։ (Հ. Գ.)

Դիակօվօ, 27 մայիսի

Պետ. Հեռ. Գործ. Թղթակիցը խօսակցեց Շէվքէթ-Տուրգուտ փաշայի հետ։ Վերջինս Ալբանիայի խաղաղացումը դեռ աւարտած չէ գտնում։ Անհամեմատ լուրջ գործողութիւններ նախատեսվում են այն տեղերում, որոնք համարվում են ալբանական անիշխանութեան օջախներ. դա՝ Րէկան է, Մալէսիան, Լիւման, Դիբրի երկիրը։ Այդ գործողութիւնների համար կենտրոնացված են՝ երկու զօրաբանակ Դիակօվօյում, մինը՝ Իփէկում։ Ալբանացիների թիւը հաշւում են 30,000 մարդ։ Շէվքէթ փաշան անպայման հաւատում է արշաւանքի բարեյաջող վերջաւորութեանը։ Վերջնական խաղաղացումը նրա ասելով կը լինի աշնանից ոչ շուտ։ Դիակօվօյում առաջվայ նման զինուորական դրութիւն է։ Բանտերը լի են ալբանացիներով. գլխաւոր զօրաբանակը այժմ գտնվում է Դիակօվօյում։ Րէկում գործում է 12 բատալիօն։ (Հ. Գ.)

Բելգրադ, 27 մայիսի

Ժամանեց թիւրքաց գահաժառանգը և ընդունվեց թագաւորից, գահաժառանգից և մինիստրներից։ Քաղաքագլուխը ողջունեց պրինցին կարճ ճառով և մատուցեց աղ ու հաց։ (Հ. Գ.)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Աստարաղ, 27 մայիսի (ուշացած)

Սէմիօնեան գիւղում, Թէյի տնկարաններում աշխատող ռուսահպատակ Սավլաեվը, տեսնելով որ տնկարանների կառավարիչը կտրականապէս մերժում է վճարել իր ռոճիկը, սպանեց նրան, յետոյ անձամբ յայտնեց եղելութեան մասին ոստիկանութեան։ Չը նայած նրա ռուսահպատակ լինելուն, նահանգապետը դատապարտեց նրան կախաղանի։ Ամբոխը յափշտակելով Սավլաեվին, գազանաբար սպանեց նրան, նոյնպէս և՝ բոլորովին անմեղ հայ Աւագին։ Ռուսաց հիւպատոսարանի կառավարչի կատարած քննութիւնը երևան հանեց տեղական իշխանութիւնների քստմնեցուցիչ վարմունքը։ Գըլխաւոր դըրդիչները կարողացել են փախչել։ Թէհրանի ռուսաց դեսպանը դիմեց պարսից կառավարութեանը կըտրուկ պահանջով՝ անյապաղ փոխել և պատժել նահանգապետին, նոյնպէս և միւս յանցաւորներին։ Դրամական վարձատրութիւն է պահանջված Սավլաեվի ընտանիքի օգտին։ (Հ. Գ.)

Թէհրան, 26 մայիսի

Պետերբուրգի պարսկական դեսպան նշանակվեց Սամադ-խանը։

Սիփէհդարը շարունակում է պնդել իր հրաժարականի վրա։ Կաբինէտի ճգնաժամը ձգձգվում է։

Թէհրանում սկսվել են կողոպուտներ։

Դավաբ-Միրզային Ղազվին տանող ռուս կօզակները Թիւրիմացութեամբ ընկան պարսից զօրքի գնդակների տակ։ Հրացանաձգութեան ժամանակ սպանվեցին 2 պարսիկ։ Դարաբ-Միրզան տարվեց Ղազվին։

Մայրաքաղաքի մզկիթում տեղի ունեցաւ Սիփէհդարի կողմնակիցների բազմամարդ ժողով։ Ներկայ էին մեծ մուշտէիդները և բազմաթիւ ամբոխ։ Արտասանվեցին կրակոտ ճառեր, որոնցով մեղադրվում էին մէջլիսի պատգամաւորներն իբրև եսասէրներ։ Բաղըր խանը յայտնեց, որ բոլոր վատ բանը առաջ է գալիս 5—6 պատգամաւորներից, որոնք կուսակցական դիտումներով անիշխանութեան են ձգտում. նրանց հարկաւոր է դուրս վռնդել։ Զինված ֆէդայիները բուռն կերպով ընդունեցին Բաղըր խանի ճառը։ (Հ. Գ.)

Արդաբիլ.—Եփրեմը իր յաղթութեան օրւանից մինչև օրս ժողովել է $1^{1}/_{2}$ միլիօն րուբլի հարկ և տուրք։ («Б.»)

Բարֆրուշ, 19 մայիսի

Ամբողջ Մազանդարանը ալեկոծված է, որի պատճառն այն է, որ Մազանդարանի նահանգական Սարի քաղաքում ամսիս 16-ին սպանվել են մի հայ, մի օսետին և մի տեղացի Թուրք։

Մանրամասնութիւնը հետևեալն է։ Մի քանի տարի առաջ կալուածատէր Սանրուդ-Դովլէն մտադրվում է Սարիի մօտ իր կալուածքում Թէյ ցանելու, դրա համար էլ հրաւիրում է այդ գործին ծանօթ օսետին Սավլաեվին, որի հետ պայմանաւորվում է և գործն սկսում։

Մի քանի ամիս առաջ Սավլաեվն իր ռոճիկի համար դիմում է Թէհրանի Սանրուդ-Դովլէին, և սա կարգադրում է իր գիւղօրայքի կառավարչին (մուբաշիր), որ Սավլաեվի ռոճիկը միշտ իր ժամանակին վճարվի։

Անցնում են ամիսներ, բայց մուբաշիրը միշտ ձգձգում է, փող չէ տալիս։ Սավլաեվն այդ առիթով նրան զգուշացնում է, բայց մուբաշիրն ուշադրութիւն չէ դարձնում։ Սավլաեվը դիմում է ծայրայեղ և յանդուգն միջոցի և սպանում է մուբաշիրին։

Լուրն իսկոյն տարածվում է և ամեն կողմից ամբոխը համախմբվում է դիակի շուրջը։

Առանց այն էլ քաղաքում անբաւականութիւն էր ծագել այն առիթով, որ քաղաքային և անուղղակի նոր հարկեր էին մտցված, և ժողովուրդը չէր ուզում վճարել այդ հարկերը։

Ամբոխն այդ սպանութեան առիթով աղաղակներով դիմում է ադլիէն (դատարան), որտեղ արդէն բերված են եղել Սավլաեվն և նոյն կալուածներում ծառայող մի հայ երիտասարդ (Թաւրիզեցի է և, եթէ չեմ սխալվում, Թիւրքահպատակ)։ Այս վերջին երկուսը շղթայվում և հարցաքննվում են։ Ադլիէում են լինում դատաւորը, նազմիէն և ուրիշ վարչական մարդիկ։

Ամբոխը հետզհետէ խտանում է ադլիէի դռների առաջ և պահանջում իրան յանձնել օսետինին և հային՝ մուբաշիրի վրէժը լուծելու համար, ոչինչ չուզելով լսել։ Դատաւորը և միւսները ոչ մի կերպ չեն կարողանում զսպել կատաղած ամբոխին։ Խուժանը ներս է խուժում ադլիէի շէնքը, բարձրանում վերև և սենեակից դուրս բերում շղթայակապ մեղադրեալներին և բարձր պատշգամբից վայր գլորում երկուսին էլ սալայատակի վրա։ Մեղադրեալները ջարդուածքներ ստանալով անզգայանում են, բայց կատաղած ամբոխի գազանային բնազդները դրանով չեն հանգստանում, այլ նա կտոր-կտոր է անում զոհերի զգայացիկ մարմինները։

Տեղական հայերը այդ դէպքի միջոցին Թաքնված են եղել։ Խուժանը յետոյ յարձակվում է մի հայի մագազինի վրա, բայց բարեբաղդաբար ինչ-որ դիպուածով յետ է քաշվում։

Այդ դէպքը Մազանդարանի բոլոր օտարազգիներին ցնցել է. բոլորն էլ յուզված են. եթէ կառավարութիւնը խիստ և կտրուկ միջոցներ ձեռք չառնի այդ գազանացած ամբոխի ղեկավարներին խիստ պատժելու, դրութիւնը խիստ լուրջ հետևանքներ կունենայ։

Երէկ արդէն Սարի է գնացել Աստրաբադի ռուսաց հիւպատոսը։ Էլ-Դոն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Վաղարշապատ, 23 մայիսի

Ամսիս 21-ի երեկոյեան ժամը մօտ 5-ին, երբ ամպերը գոռում-գոչում սկսեցին՝ Մասիսի վրայից մի ահագին սև ամպ ուղղվեց դէպի մեր կողմը։ Չանցաւ մի քանի րոպէ, մի սարսափելի և չը տեսնված մեծութիւնով (մօտ հաւի ձուի մեծութեան և տեղ-տեղ $^{3}/_{4}$ ֆունտի չափ) կարկուտ տեղաց և ի դերև հանեց գիւղացու բոլոր յոյսը, տասնեակ հազարների վնաս հասցնելով թէ այգիներին և թէ ցանքսերին։ Ժողովրդի վայնասունը, լացն ու կոծը երկինք էր հասնում։ Մի րոպէում Վաղարշապատը սգատուն էր նմանում, ցաւն ընդհանուր էր։ Դաշտի պահապանները գիւղ հասան և գուժեցին դաշտում աշխատող կանանց՝ տեղացող կարկտից ուշաթափված լինելը և ցանքսի վնասվելը։ Մարդիկ բժիշկ և պրիստաւ առած՝ կառքերով և ձիերով բժշկական օգնութեան հասան և կարկտից վնասված ու կապտած կանանց գիւղ բերին։ Ես անձամբ տեսայ, թէ հարուածից մի կնոջ ամբողջ մարմինը ինչպէս էր կապտել։ Առայժմ որքան կարողացանք տեղեկանալ, կարկտահար են եղել հետևեալ գիւղերը. Վաղարշապատի մի մասը, Փարաքարի մի մասը, Խաթունարխ, Ղարխուն, Ներքսաշէն (Աթաբէգեանի կալուածքը) և Վարժագիւղ։ Վնասը հաշւում են հարիւր հազարներ։ Այժմ գիւղացու յոյսը մնացել է կառավարութեան և վանքի վրա։

Վահան ք. Աղազադեան

Մօզդօկ, 22 մայիսի

Մայիսի 18-ի երեկ. ժամը $7^{1}/_{2}$-ին տեղս ժամանեց Աստրախանի հայոց առաջնորդ Մխիթար եպիսկոպոսը։ Աստուածամայր եկեղեցու գաւթում, ներկայութեամբ երկսեռ բազմութեան և ծխ. դպրոցի աշ.-աշակերտուհիների, ընդունվեց նորին սրբազնութիւնը։

Հետևեալ օրը, մայիսի 19-ին, առաջնորդն այցելեց և ս. Ստեփաննոս եկեղեցին և ապա նրա գաւթում գտնվող ծխ. դպրոցը, ուր աշակերտներին ամեն մի առարկայից քննեց և գոհ մնաց դպրոցից։

Ամսիս 20-ին ս. Ստեփաննոս եկեղեցում առաջնորդը ներկայ եղաւ պատարագին և քարոզ խօսեց՝ շեշտելով ընդհանուր հայ ժողովրդի անտարբերութիւնը դէպի հայ եկեղեցին և լեզուն. ամենից վերջը յայտնեց, որ ինքը, աշխարհի վայելչութիւնից հեռացած լինելով, ոչ մի կարօտութիւն չունի անձնական պատիւ ստանալու համար և ոչ էլ նշանակութիւն կը տայ դանգահարութեանը, այլ ինքը մխիթարված կը լինի այն ժամանակ, երբ կը տեսնէ հայ ժողովրդի բարօրութիւնը, երբ կը տեսնէ իրար հետ սիրով կապված և միահամուռ ոյժերով բոլոր ազգային հիմնարկութիւնների շուրջը գործելիս. ուրախ կը լինի այն ժամանակ, երբ կը տեսնէ, որ ժողովուրդը ձգտում է կրթել իր մատաղ սերունդը՝ դարձնելու համար նրան լաւ քաղաքացի և պետութեան բարի և ազնիւ անդամ։

Մայիսի 21-ին սրբազանը այցելեց զանազան հիմնարկութիւններ, ռուսաց մայր եկեղեցին և րէալական դպրոցը։

Հետևեալ օրը կէս օրվայ ժամը 3-ին առաջնորդը մեկնեց քաղաքից։ Նրան ուղեկցում էին մինչև Եգեսիա՝ Մօզդօկի երկու երէցփոխները, հոգաբարձուներ և ուսուց. կազմը։

Վ. Վարդանեան

Ղալաչա, 24 մայիսի

Նորից գիւղացիներին մեծ դժբաղդութիւն հասաւ։ Տասնեակ գիւղերի բնակիչներ իրանց ամբողջ տարվայ դառն քրտինքով ձեռք բերած աշխատանքից զրկվեցին և ով գիտէ քանի աջող տարի պիտի բոլորեն, որ այս մեծ տնտեսական քայքայումը նորից վերականգնվի։ Կարկուտը սկսվել է Լալվար սարից, ոչնչացրել է Ծօճկան գիւղի արտերի մեծագոյն մասը. նոյն գիւղի հանդում, քարի գլխին, գութանաւորները նկատելով մօտահաս վտանգը՝ ուլախները բաց են Թողնում և իրանք կարպետները վերցնելով քարայրերի մէջ մտնում. գութանի ուլախը, որը բաղկացած է լինում 9 զոյգից (18 հատ գոմէշ և եզ խառն), կարկուտից քշվում և ահագին քարաժայռերից ներքև է Թափվում և ոչնչանում։ Միայն մի եզն է կարողանում յետ փախչել և ազատվել։ Կարկուտը Ծօճկանի հանդից անցնում է Արճէշ գիւղի սահմանը, որտեղ դարձեալ արտերի մի մասն և խաղողի այգիների մեծ մասը ոչնչացնելով անցնում է Ճալա կամ Լճկաձոր գիւղի սահմանը. այդտեղ ոչնչացնում է համարեա ամբողջ արտերը և խաղողի այգիները, անցնում է Ղազախի գաւառի Կող գիւղի հանդը՝ ոչնչացնելով գիւղից արևմուտք բոլոր արտերն և խաղողի այգիները։ Ապա շարունակում է ճանապարհը Բաղանիս գիւղի հանդով ոչնչացնելով արտերի մի մասը և խաղողի այգիները և սկսում է աւելի լայնանալ և մեծ տարածութիւն բռնել. նա ոչնչացնում է Ջուջևանքի ամբողջ հանդը՝ արտերով, պտղատու ծառերով, բանջարանոցներով և ամեն ինչ սև ցեխ է դարձնում. նոյնն կատարում է և Բաղանիս գիւղում. ամբողջ գիւղի սահմաններում ոչ մի հասկ չէ Թողնում և ոչ մի վազի տերև. ծառերը մերկացել են՝ ինչպէս ձմեռվայ ժամանակ են լինում. գետնից կարտոֆիլ է հանել կարկուտը. գետինը ծածկվել էր կարկուտի ահագին կոյտով, այնպէս որ երկու օր գետինը ծածկված էր սպիտակ սաւանով, ինչպէս ձմեռը ձիւնով. ոչ մի թռչուն չէր կարողացել ազատվել, մանր գազանիկներն ևս. վնասել է Ղօշղօթան գիւղի արտերի փոքր մասը և խաղողի այգիների մի մասը. կարկուտը ոչնչացրել է Բաղանիս-այրումի արտերը, այդտեղից անցել է և ամբողջովին փչացրել Դուշչի-այրումը և Փարաքշու գիւղերի արտերը. վնասել է Մազամլու, Աքսիբարա և Կունէն գիւղերի արտերը։ Այսպիսով 4—5 ժամվայ ընթացքում այսպիսի սարսափելի հարուած է հասցրել՝ մօտաւորապէս 14 գիւղի, որոնցից, ինչպէս յիշեցի վերևը, մի քանի գիւղեր բոլորովին զրկվել են ապրուստի միջոցներից՝ արտի կողմից. ինչ պիտի լինի սրանց դրութիւնը և ով պիտի օգնէ սրանց. ոչ ուտելու հաց ունեն, ոչ աշնան համար սերմացու։

Կրիտիքական է գիւղացիների դրութիւնը և մասամբ էլ իրանք են յանցաւոր՝ ահա թէ ինչու. ճիշդ է, որ մեր գիւղացիները հազիւ հազ ամբողջ տարին աշխատելով կարողանում են հարկերը վճարել, բայց եթէ մի փոքր հեռատեսութիւն ունենային, մի փոքր մտածէին այսպիսի փորձութիւնների վրա, տարեկան մի չնչին մաս վերցնէին ապագայի համար, այժմ այսպէս տարակուսած չէին մնայ։

Գիւղացին ամբողջովին կրքի կոյր է և նախանձի, չարութեան ամբար, բարի, օգտաւէտ ձեռնարկութիւններին հակառակորդ. այս էլ պիտի ասել, որ գիւղական մասսային պղտորող և քայքայման հասցնողը լինում են մի քանի մարդիկ, որոնց՝ մասսան ոչխարի ուղեղով լսում է։

Այս ձևով ապրելով և այս կազմութիւններով՝ մեր գիւղացիները իրանց գոյութիւնը չեն կարող պահել. կոյր աչքով են նայում դէպի կեանքը, լի նախապաշարմունքներով։ Մեր հայ գիւղացիները պիտի կրկնապատկեն, եռապատկեն իրանց աշխատանքը՝ որ կարողանան փոքր ի շատէ ապահով ապրել և այսպիսի ձախորդ տարիներում կարողանան իրանց պահել, առանց ուրիշների դռներն ընկնելու, առանց մուրալու. այնքան ծոյլ են, որ ամբողջ ամիսներով պարապ նստում են, լծկան եզներն ու գոմէշները գոմերում կերակրում. իսկ տաւարի, ոչխարի ոսկեայ աղբը կրակում, առանց փիլիսոփայ լինելու նկատելի է, շատ հեշտ և պարզ կերպով նկատելի, որ փեյնած հողը տասնապատիկ օգուտ է տալիս, բայց մեր գիւղացիները պարապ-սարապ հաւաքվում են գիւղամէջը և ամբողջ օրերը հայհոյանքներով և բամբասանքով անցնում։ Մեր գիւղացիների աղքատութիւնը առաջացել է ծուլութիւնից և տգիտութիւնից, թէև մեր կրթվածներն էլ մի գատ չեն։

Մելքիսեդեկ քահ.

Ղշլաղ, 26 մայիսի

Գիւղից ոչ հեռու, «Սև-քարի Հանդ» կոչվող դաշտում, գտնվում է մի քարահանք, ուր տարվայ մեծ մասը աշխատում են հողազուրկ և քեասիբ գիւղացիները՝ հազիւ-հազ օրական վաստակելով 30—40 կոպէկ։

Որովհետև քարահանքում աշխատանքը կատարվում է նահապետական եղանակով և նախնական գործիքներով, ուստի իւրաքանչիւր քարհատից պահանջվում է մեծ ռիսկ և ֆիզիկական ոյժի ահագին սպառումն. դրա համար էլ աշխատաւորներից շատերը մի քանի տարի աշխատելուց յետոյ կամ ստանում են անբուժելի հիւանդութիւններ կամ հաշմանդամ ընկնում են անկողին։

Բայց դա միայն չարիքի փոքրագոյնն է։ Համարեա ամեն տարի քարահանքի փլատակներին զոհ են գնում մի քանի աշխատաւորներ։

Նոյն տեսակ դժբաղդութիւն այս տարի էլ կրկնվեց։

Սրանից մի շաբաթ առաջ քարի մի հըսկայ «քեօթուկի» տակ ընկաւ իր անզգուշութեան պատճառով՝ քարհատ Սարօ Ալէքեանը։ Ջոհին կիսակենդան, ջարդված՝ տուն հասցրին։

Բժշկական օգնութիւնից զուրկ և տարրական խնամքի կարօտ, ամսիս 25-ին ծանր չարչարանքներով մեռաւ, Թողնելով անօգնական և բոլորովին քաղցած ու մերկ 4 մանր երեխաներին և երիտասարդ կնոջը։

Տեղիս ծխական դպրոցում պարապմունքները վերջացան։

Հոգաբարձական կազմը և աւագ-ուսուցիչը տուել են իրանց վերջնական հրաժարականը։

Դպրոցը գտնվում է տնտեսական ճգնաժամի մէջ։

Հասարակութեան մեծամասնութիւնը անտարբերութեամբ է վերաբերվում դէպի այդ հիմնարկութիւնը։ Մ. Ղ.

Բալախանի, 21 մայիսի

Վերջին ժամանակներս տեղի ունեցան մի շարք սպանութիւններ և կողոպուտներ, որոնք պսակվեցին երէկվայ քստմնելի դէպքով, որ հետևեալն է։

Երէկ, ամսիս 20-ին, առաւօտեան ժամը 9-ին, երբ Մուսա-Նաղիևի նաւթահանքի կառավարիչ Թալխանօվը կառքով գնում էր նաւթահանքը, ճանապարհին մաուզերներից արձակված երկու գնդակով սպանվեց։ Թալխանօվը դեռ երիտասարդ էր։

Ոստիկանութիւնը դէպքի վայրը հասնելով, մի քանի ականատես վկայ բանւորների ցուցմունքով մտաւ Ռօմանի գիւղը և շրջապատեց տեղական մզկիթը, ուր, ինչպէս բանւորներն են յայտնում, Թաքնված է եղել սպանողը։ Խուզարկութեան ժամանակ տեղի է ունենում փոխադարձ հրացանաձգութիւն և սպանվում է Թաքնված մարդասպանը։

Ջարագործի անձնաւորութիւնն ստուգելուց երևաց, որ նա Քութայիսի նահանգի Օզուրգէթի գաւառից է Սիմէօն Տապուրի անունով, անգործ։

Այնուհետև գիւղում տեղի ունեցաւ խուզարկութիւն Ահմէդ-Վէլիևի տանը, որի բակում ապրող մի վրացու սենեակում ձերբակալեցին մի այլ վրացու՝ Գէօրգի Դօլիձէ անունով։

Այդ վերջինիս մօտ գտան մի այցետոմսի Թերթ, որի վրա գրված էր «Հիւսէին խան». դա սպանված կառավարչի անունն է։

Սպանութեան պատճառներն առայժմ անյայտ են և բանւորական ոչ մի խնդիր չէ կասկածվում, ուստի և խիստ կասկածելի հողի վրա է կատարված սպանութիւնը։ Սպանութեան օրն իսկ քաղաքապետ Մարտինօվը եկաւ Բալախանի և անհրաժեշտ կարգադրութիւններն արեց՝ լուսաբանելու համար խորհրդաւոր ոճրի պատճառները։ Հանգուցեալը վերին աստիճանի հեզ և արդարասէր մարդ էր։ Ս. Գարագաշ

Բաթում, 20 մայիսի

Անցեալ տարի դպրոցում կարդացվում էին մի շարք դասախօսութիւններ։ Համարեա ամեն կիրակի մենք՝ ծնողներս գնում էինք դպրոց՝ լսելու ուսուցիչ Գուլոյեանի դասախօսութիւնները։ Արդէն ուսումն. տարին անցնում է, մենք ունեցել ենք միմիայն մի դասախօսութիւն. դասախօսը, մեր ծխ. դպրոցի ուսուցչուհիներից մէկն, չը նայած որ ընտրել էր իր դասախօսութեան համար հետաքրքրական թեմա՝ «Մօր դերը մանկան ֆիզիկական, մտաւոր և բարոյական դաստիարակութեան մէջ», բայց չը կարողացաւ գոհացում տալ իր ունկնդիրներին, որովհետև չէր իմանում հայերէն լեզու, որով դասախօսում էր։

Այդ դասախօսութիւնից մինչև օրս ամիսներ անցան և ահա ուսումն. տարին վերջանալու վրա է, բայց մենք՝ Բաթումի հայերս զուրկ մնացինք դասախօսութիւններից։ Եւ դրա պատճառն այն է, որ դպրոցում ուսուցիչների միջև ծագած տարաձայնութիւնները մոռացնել տուին ամեն ինչ... Խեղճ ծնողներ... ուսուցիչները կռւում են, իսկ իրանք զրկվում դասախօսութիւններից և իրանց որդիները՝ կանոնաւոր ուսումից... Իսկ ուսուցչական խմբի մէջ ծագած Թիւրիմացութիւնը հետևեալն է։ Սկզբում դըպրոցի աւ.-ուսուցիչ Խաչատրեանը կռւել է վարժուհի Տէր-Մկրտչեանի հետ. վարժուհուն պաշտպանել է ուսուցիչ Նարինեանը. այդ դուր չէ եկել աւ.-ուսուցչին։ Գործը լուրջ կերպարանք կը ստանար, եթէ կողմնակի մարդիկ չը միջամտէին և վերջ չը տային այդ անմիտ կռւին։ Բայց դեռ չը հանդարտված՝ վրա եկաւ մի այլ աւելի դժուար հարց։ Նարինեանը իր դասի ժամանակ նկատողութիւն է անում մի աշակերտի, դասը խանգարելու համար. աշակերտը վեր է կենում և փողոցային խօսքերով հայհոյում ուսուցչին. ուսուցիչը ստիպված է լինում վռնդել նրան իր դասերից, մինչև հարցի լուծում ստանալը. մի քանի անգամ մանկավարժական ժողովներ գումարելով ոչ մի եզրակացութեան չեն գալիս։ Նարինեանը յայտնում է, որ այլ ևս այդ աշակերտի հետ երբեք չի համաձայնի պարապել, և առաջարկում է առանց այլևայլութեան աշակերտին վռնդել դպրոցից, ուրիշներին վատ օրինակ չը լինելու համար, և դնում է իր ուլտիմատումը. եթէ աշակերտը ընդունվի՝ ինքը ստիպված կը լինի հրաժարվել։ Մանկավարժ. ժողովը ձայների մեծամասնութեամբ վճռում է աշակերտին ընդունել։

Վերջը մանկավարժական ժողովը փոխում է իր որոշումը. տալիս է ուրիշ որոշում, որ ուսուցիչն էլ լինի, աշակերտն էլ։ Այդպիսով իբրև Թէ վերջ է տրվել այդ դժբաղդ գործին։

Ահա մայիսը վերջանում է, Աստուած ոչ անի յանկարծ ժողովուրդը քննութիւն պահանջէ. հաւատացած եղէք, որ 99 տոկոսը կը տապալվի։ Մեր յարգելի ուսուցիչները, Թոզ փչելու համար, շարունակ աշակերտական ներկայացումներ են սարքում, աշակերտները դուրս են գալիս Թութակի պէս արտասանում մի քանի խօսքեր, և դրանով ուսուցիչները պարծենում են, թէ բան են սովորեցրել. իսկ թէ որքան ժամանակ են կորցնում, դասերից զրկում խեղճերին՝ այդ երկու խօսքը սովորեցնելու համար՝ այդ ոչինչ։

Երբ մտնում էք դասարան, ուղղակի ապշում էք. աշակերտները Պարսկաստանի զօրքերին են նմանում. մէկը նստած է պատուհանի ներքնատախտակի վրա, միւսը նստարանի վրա, երրորդը Թիկն տուած նստարանին, չորրորդը խօսակցութեամբ է զբաղված. աղաղակ, աղմուկ. ոչինչ չէ կարելի լսել։

Աշակերտին դաս է հարցնում ուսուցիչը։ Աշակերտը վեր է կենում, դէս է նայում, դէն է նայում, ծիծաղելով պատասխանում է, որ չը գիտէ։ Եւ այդպէս ամեն աշակերտ իրաւունք ունի ասելու, առանց քաշվելու, և ոչ մի նկատողութիւն ուսուցչի կողմից։ Ուսուցիչը ստիպված պէտք է որոնէ այնպիսիներին, որոնք շատ թէ քիչ մի քանի խօսք գիտեն. սրանք էլ նրանցից շատ հեռու չեն։ Չը նայած գիտեն որ իրաւունք ունեն այդպէս պատասխանելու, բայց տանը հանգիստ չեն տալիս խեղճերին, ստիպում են սովորելու. և այդպիսով այն տեղը հասցրին, որ մի օր աշակերտը վեր կացաւ և յայտնեց, որ այլ ևս չէ ուզում ուսուցչին լսել ու դուրս է գնում դասարանից, թէ ինչու՞ այդ Թոյլ տուէք իրան աշակերտին իմանալու. մի քանի օր դըրսում խաղալուց յետոյ երբ ձանձրանում է, դարձեալ մտնում է դասարան, իսկ ուսուցչի պատասխանը միայն լինում է. «Հը՞, եթէ քաջ էիր՝, խօսքդ առաջ տանէիր է...»։ Մի քանի ժամանակից յետոյ նոյն աշակերտը դարձեալ նոյն խաղն է խաղում...

Մանկավարժ. ժողովների նիւթ է դարձել այդ հարցը, բայց թէ ժողովն ինչ եզրակացութեան է եկել, չը գիտեմ։

Այս անարխիայի պատասխանատուութեան նշանաւոր մասն, անշուշտ, ընկնում է հոգաբարձութեան վրա։ Հոգաբարձութեան անդամներից գոնէ մէկը գէթ մի անգամ չէ բարեհաճել յաճախել դասերին և ծնողական ժողովներին... Ծնող

Բելաքան գ. (Զաքաթ. շրջ.), 24 մայիսի

Ահա ամբողջ երկու շաբաթ է, ինչ մեզանում տեղում է յորդ անձրև. բոլորն էլ ուրախ էին, որ այս տարվայ ցանքսը առատ բերք պիտի բերէ, բայց մայիսի 23-ի կարկտախառն անձրևը ամենքի ուրախութիւնը փոխարինեց տխրութեան։

Այդ օրը առաւօտեան եղանակը շատ պարզ էր, բայց ճաշից յետոյ սկսեց երկինքը ամպել և մի փոքր ժամանակից յետոյ ամպերն սկսեցին գոռալ. գոռոցին հետևեց կարկտախառն և յորդառատ անձրև։ Կարկուտը, կաղնի և ընկոյզի մեծութեամբ, անխնայօրէն ծեծեց մեր գիւղի և շրջակայքի արտերը։

Առանձնապէս մեծ վնաս կրեցին ծխախոտի տնկարաններն, ինչպէս և պտղատու ծառերը։ Շատ տեղերում կարկուտը ընկել է ձուի մեծութեամբ։

Բելաքան գիւղը շրջանումս ամենամեծ գիւղերից մէկն է համարվում. ունի մինչև 2500 տուն ազգաբնակութիւն. բնակիչները ամբողջապէս լեզգիներ են, որոնք ունեն լաւ վար ու ցանքս անելու ազատ հողեր։ Այս շրջանում իւրաքանչիւր տարի առատ բերք է լինում կաղնի և բոժոժի, իսկ միւս մթերքների շատ լինելուն էլ խօսք անգամ չէ լինում ասելու։

Ահա բնութեամբ հարուստ մի այդպիսի մեծ գիւղ, շնորհիւ այս տարվայ վատ եղանակների, շատ անմխիթար վիճակի է մատնված։ Յ. Խաչումեանց

Մ. Ա. ԲԱԼԱԿԻՐԵՎ

Երաժշտական աշխարհը այս օրերս ունեցաւ մի ծանր կորուստ։ Պետերբուրգում 74 տարեկան հասակում իր մահկանացուն կնքեց նշանաւոր երաժշտագէտ և երաժշտական գործիչ Միլ Ալէքսանդրովիչ Բալակիրեվը։

Հանգուցեալը բնիկ Նիժնի-Նովգորօդցի էր, որտեղից անցեալ դարի կէսերին գնաց Պետերբուրգ, ուր ծանօթացաւ Գլինկայի հետ, որի ազդեցութիւնը մեծ եղաւ նրա վրա։ Շուտով նա իր բնական երաժշտական ընդունակութեամբ առաջ է գնում և սկսում է շփվել այն շրջանի հետ, որի անդամներն էին Րիմսկի-Կորսակօվ, Կիւի, Բօրօդին և այլք։

Բալակիրեվը Եւրոպայի հասարակութեան ուշադրութիւնը հրաւիրեց, երբ Պրագայում դրեց «Ռուսլան» օպերան։

Պետերբուրգում նա հետզհետէ վարեց մի քանի երաժշտական պաշտօններ և երկու անգամ եկաւ Կովկաս, ուր տեղական հայկական և վրացական եղանակներով ներդաշնակեց մի քանի արևելեան երգեր։

Ի միջի այլոց հանգուցեալը բաւական օժանդակեց մեր երաժշտագէտ Մակար Եկմալեանին «Պատարագի քառաձայն արարողութիւնը» աշխատութեան և ուրիշ մի քանի հայկական երգերի ներդաշնակութեան գործում, երբ Եկմալեան սերտ առնչութիւն էր հաստատել Պետերբուրգում հանգուցեալի, Ռուբինշտէյնի, Չայկօվսկիի և Կազանչենկօյի հետ։

Բալակիրեվի գրուածքներից իր ներդաշնակութեամբ յայտնի է «Իսլամէ» ֆանտազիան, «Թամարա» սիմֆօնիական պօէզիան, «Վրացական երգեր» ռոմանսները և այլն։

Հանգուցեալը թէ իբրև երաժշտագէտ և թէ իբրև մարդ իր հեզ բնաւորութեամբ սիրելի էր ռուսաց ինտելիգենցիային, որն իր խորին յարգանքը ցոյց տուեց նրա

Թաղման օրը՝ մայիսի 19-ին։ Թաղումը կատարվեց Ալէքսանդրո-Նեվսկի տաճարում։

Ե.

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Հեռագրով)

Պետերբուրգ, 24 մայիսի

Նախագահում է իշխան Վոլկոնսկին։ Շարունակվում են վիճաբանութիւնները ֆինլանդական օրինագծի մասին։

Սոկոլով 2-րդ առաջադիմականների կուսակցութեան անունից մատնանշում է նախագիծը մտցնելու չափազանց փութկոտութեան վրա, ընդգծում է, որ նրա 'հիմնական պատճառաբանութիւնը—ռուսաց պետական ինքնագիտակցութեան և նացիոնալիզմի զարգացումը—քննութեան չէ ենթարկվում, նախազգուշացնում է Դումային այն վտանգաւոր հետևանքներից, որոնք կը առաջ գան նախագիծը ընդունելուց յետոյ (ծափեր ձախից)։

Քուէարկութեամբ ընդունվում է խօսք տալ վերջնականապէս 15 հռետորի։

Աջակողմեան իշխան Տեբշեվից յետոյ յայտարարվում է դադար, որից յետոյ նախագահում է Գուչկովը։

Ռոդիչևը մի ժամ շարունակ քննադատում է մինիստրների խորհրդի Նախագահի և նախագծի պաշտպանների ճառերը, պնդում է, որ նրանց նացիոնալիզմի երևալը ներկայ դէպքում հետևանք է՝ ատ ուրիշի իրաւունքը տածած ատելութեան, գտնում է, որ Ռուսաստանի համար անհամեմատ օգտակար է ունենալ Ֆինլանդիայում ուժեղ և լօյալ ազգաբնակութիւն, քան մի երկիր, որ ոտնահարվում է Բոբրիկովեան ռէժիմի տակ, որի մէջ ռուսաց կառավարութիւնը նախօրօք տեսնում է թշնամուն։ Հռետորը առարկում է ֆինանսական հաշիւների դէմ, ասելով որ հաւատը դէպի Միապետի անդրդուելի խօսքերը աւելի կարևոր է դրամական հաշիւներից. ինչ վերաբերում է ռուսական իրաւագիտակցութեան, որի վրա յենվում են նախագծի պաշտպանները, նա վաղուց է ճնշված ոստիկանական ռէժիմով։ Նախազգուշացնելով Դումային նախագծի ընդունումից, հռետորը ասում է, որ Ֆինլանդիային կարելի է իրաւազուրկ դարձնել, կարելի է անպատժ փոխել, բայց սպանել Ֆինլանդիայի ժողովրդական ոգին անհնարին է. աջակողմեանները կամենում են Ռուսաստանին միացնել մի դիակ, ձախակողմեանները ցանկանում են, որպէս զի Ֆինլանդիան մնայ կենդանի ժողովուրդ, հաւատացող իր իրաւունքին և ռուս ժողովրդի արդարադատութեան։ Հռետորը վերջացնում է դիմելով աջակողմեաններին. «Ես գիտեմ, որ հարցն արդէն նախորոշված է, անօգուտ է համոզել ձեզ, սակայն այդ կարգը երկար չէ կարող տևել։ Դուք, մթագնելով ռուս ժողովրդի գիտակցութիւնը, հրում էք նրան թեք մակերևոյթով դէպի ամօթ ու դժբաղդութիւն»։

Ռոդիչևի ճառի վերջը խլանում է աջակողմեանների աղմուկից և «բաւական է, ժամը անցաւ» բացագանչութիւններից և ձախակողմեանների ծափահարութիւնից։

Չխեիձէն կարծում է, որ «ներկայ նախագծով կենտրոնը և կառավարութիւնը,—հռետորի ասելով,—լափում են ռուսական սահմանադրութիւնը և ցանկանում են լափել ֆիննական սահմանադրութիւնը, իսկ Մակլակովը աշխատում է ըստ էութեան կտրել ֆինլանդական սահմանադրութիւնը սահմանադրական ճանապարհով։ Ի զուր ստատս-սեկրետար Ստոլիպինը ասում է, թէ ֆինլանդացիները հարստանում են ռուսների հաշւին. մեր գիւղացիութիւնը հասկանում է, որ կառավարութեան և ինտենդանտութեան բովանդակութիւնը և կաշառակերութիւնը իր համար աւելի թանգ արժեն, քան Ֆինլանդիան, հասկանում է, որ ֆինն ժողովուրդը մինչև օրս իր վիճակի դարբինն էր, ուստի և պահանջում է, որպէսզի մեր իրաւունքները հաւասարվեն ֆինն քաղաքացիական իրաւունքների հետ, և ոչ հակառակը»։ Հռետորը դատապարտում է Անրէպին, որ հրաժարվում է օտարազգիներին սիրելուց, պահանջում է նրանցից յարգել իրան և մոռանում է, որ առաջ քան ուրիշներից յարգանք պահանջելը՝ հարկաւոր է յարգել ինքն իրան և ոչ թէ ձևանալ մաքրարիւն ռուս, մինչդեռ ինքը օտարազգի է, սակայն մոռացել է իր ցեղը։ Օտարազգիները սիրում են Հերցէնների, Չերնիշեվսկիների, Պլեխանովների Ռուսաստանը։

Պուրիշկևիչը տեղից՝ «Մարկովների և Պուրիշկևիչների Ռուսաստանը»։

Չխեիձէ.—Ո՛չ, ո՛չ։ Այլազգիները սիրում են ռուս ժողովուրդը, որ տուել է Տոլստոյին, Տուրգէնեվին, Գրիբոյեդովին, որ կրթել է ձեր «գրող» ռուս պրոլետարիատին (ծափեր ձախից)։ Զգալով մերձ լինելը այն րօպէի, երբ Ֆինլանդիայի բոլոր դժգոհ տարրերը կասեն ձեզ և ձեր կառավարութեան՝ «հեռու ֆինլանդական ազատութիւնից և Ֆինլանդիայից», սօցիալ-դեմօկրատները դիմելով Ֆինլանդիային կասեն. «Կեցցէ ազատ ֆինն ժողովուրդը, կորչեն բարբարոսները և բարբարոս քաղաքականութիւնը» (ծափահարութիւն ձախից)։

Պուրիշկևիչը երկար ճառելով այն մասին, որ Ֆինլանդիան երբէք սահմանադրական պետութիւն չէ եղել, այլ եղել է սոսկ Ռուսաստանի մի նահանգը, վերջացնում է այսպէս. «Ֆիննլող հարցը հանդիսանում է մեր պետական խելահասութեան քննութիւն։ Ընդունակ ենք, արդեօք, մենք տանել ֆինլանդական օրինագիծը մինչև վերջ, դա ցոյց կը տայ մօտիկ ապագան. յամենայն դէպս մենք պէտք է յոյսներս դնենք ազգային ինքնագիտակցութեան զգացմունքի և Ֆինլանդիայում գտնվող ռուս զօրքի պատրաստակամութեան վրա, որ պէտք է իր պարտքը կատարէ առաջին իսկ պահանջին» (երկար ծափեր աջից)։

Ուշ լինելու պատճառով նիստը յետաձգվում է երեկոյեան։

Երեկոյեան նիստին նախագահում է Շիդլովսկին։

Աջէմեանը առարկում է նախագծի դէմ, համարելով նրան նոյնիսկ պետական ծրագրի տեսակէտից մի տեսակ պարտաւորութիւն, որ յանձն առնել կարող է միայն այն մարդը որի վրա հարկաւոր է խնամակալութիւն նշանակել (ծափահարութիւն)։ Ձախակողմեան գիւղացիների կողմից հռետորը խօսում է նախագծի դէմ, գտնելով որ ռուս ժողովուրդը չէ լիազօրել իր ընտրեալներին, որոնք դեռ չեն քաղել նրանից կապանքները, կապանք դնել մի ուրիշ ժողովրդի ազատութեան վրա (ծափեր ձախից)։

Կուզնեցովը քննադատելով Ստոլիպինի ճառը ընդգծում է, որ օրինագիծը ուղղված է յափշտակելու ֆինլանդացիների իրաւունքները։ Ֆինլանդական ազգի ազատութիւնը ոչնչացնելու մէջ շահագրգռված չէ ռուս ժողովուրդը յանձին գիւղացիների և բանւորների, այլ շահախնդիր է միայն միացեալ ազնուականութիւնը։

Հռետորը խոր համոզմունք է յայտնում, որ շուտով կը հասնի այն շրջանը, երբ բարձի թողնված ռուս բանւոր ժողովուրդը, միանալով ճնշված ֆինլանդացիների հետ, կը վերադարձնէ իր ազատութիւնը և բոլոր ոտնահարված իրաւունքները (ծափեր ձախից)։

Բարոն Մէյենդորֆը, մանրամասն բացատրելով կառավարական նախագիծը, մատնանշում է փաստերով, որ ֆինլանդական հարցը զանազան ժամանակներում լուծվել է զանազան տեսակ։ Հերքելով Ստոլիպինի մի քանի սխալ ասածները և ընդգծելով որ ֆինլանդական օրէնսդրութիւնը ներկայումս շատ անորոշ է, հռետորը վերջացնում է ասելով թէ նրա մասին կարելի է վիճել, բայց չէ կարելի մեղադրել ֆինլանդացիներին խաբեբայութիւնների և կեղծիքների մէջ, որ ֆինլանդական օրէնսդրութիւնը, որ արդէն մտել է կեանք և վաւերացվել հեղինակաւոր ակտերով, պէտք է սրբութեամբ ճանաչվի։ Հռետորը վերջացնում է. «Դուք կամենում էք կտրել Ֆինլանդիայի իրաւունքները և դրանում ազգային յուշարձան էք տեսնում, բայց ես չեմ կամենում բաժանել ձեզ հետ դրա պատասխանատուութիւնը» (բուռն և երկարատև ծափահարութիւն ձախից և մասամբ կենտրոնից)։

Մի քանի առաջարկութիւններ է անում զեկուցանողը։

Մայիսի 25-ի երեկոյեան նիստում Բոբեանսկին մատնանշում է, որ ֆինն ժողովուրդը միշտ վայելել է ռուս Թագաւորների սէրը շնորհիւ իր լօյալ վարքի, բայց 80-ական թւականներից ռուս կառավարութիւնը, մամուլի մի մասի մէջ երևացած արշաւանքի ազդեցութեան տակ ընդդէմ Ֆինլանդիայի, սկսեց հրատարակել մի շարք ակտեր, որոնցով խախտվում էին Ֆինլանդիայի իրաւունքները։ Այն օրից դրութիւնը աւելի է վատթարացել։ Այժմ մի բան է մնում. մերժել օրինագիծը, որ ձեռնմխում է ֆինն ժողովրդի սրբազան իրաւունքներին (ծափեր ձախից)։

Մարկով 2-րդ պատմական փաստերով ապացուցանելով, որ Ֆինլանդիան հնուց պատկանել է ռուսներին, և կանգ առնելով առանձին-առանձին նախկին հռետորների ճառերի վրա՝ գալիս է այն եզրակացութեան, թէ ինչ որ կադետների մտքումն է, սօցիալիստների լեզուի վրա է. առաջարկում է ձգելով ֆինլանդական ամբողջ «խլամը» ռուս ժողովրդական ատելութեան տաք վառարանը, ենթարկել փոքրիկ ասիական ժողովրդին ռուսաց օրէնքին (երկարատև ծափահարութիւն աջից)։

Լուչինսկի եւ Պոկրովսկի 2-րդ խօսում են օրինագծի դէմ։ Վերջինս աւարտում է իր ճառը հետևեալ խօսքերով. «Մի զարթեցնէք ռուս ժողովրդին, որովհետև, զարթնելով, նա դէն կը շպրտէ իրանից շահագործողների այն պլերաժիտը, որի ծանրութիւնը դուք կամենում էք այժմ դնել ազատ ֆինն ժողովրդի վրա։ Սօցիալ-դեմօկրատները առաջարկում են վերցնել այժմեան նախագիծը, որովհետև նա խախտում է Ռուսաստանի և Ֆինլանդիայի հիմնական օրէնքները։ Իսկ յօդուածային ընթերցման անցնելը կը նշանակէր հակասահմանադրական գործ կատարել» (ծափեր ձախից)։

168 ձայնով ընդդէմ 162-ի վճռվում է շարունակել նիստը մինչև յօդուածային ընթերցման անցնելու քուէարկութիւնը։

Մասլեննիկովի խօսելուց յետոյ, որ խօսում է նախագծի պաշտպանների դէմ, զեկուցանող Բէնիգսէնը բանաձևում է խօսակցութիւնները, պաշտպանելով մասնաժողովի եզրակացութիւնը։

Ընդհանուր վիճաբանութիւններն աւարտված են։

199 ձայնով ընդդէմ 116-ի մերժվում է սօցիալ-դեմօկրատների առաջարկութիւնը։

Ձայնատուութեան շարժառիթների նկատմամբ բարօն Ֆէլկերզամը յայտնում է, որ, երբև համոզված միապետական և պահպանողական, նա դէմ է Միապետի իրաւունքները կարճելուն և Դումայի իրաւունքները ընդլայնելուն, ուստի և նախագիծը ընդունում է անցանկալի (ընդհանուր շարժում դահլիճում)։

Ֆուլկինը պետական գիւղացիների անունից հնարաւոր չէ գտնում ձայն տալ յօգուտ յօդուածային ընթերցման։

Միլիւկովը յայտնում է, որ կադէտները, առաջադիմականները, լեհական կոլօն և մահմեդական խմբակը, գտնելով որ նախագիծը միանգամայն հակասում է Հիմնական Օրէնքներին և ահագին վնաս է բերում ռուս ժողովրդի ինքնագիտակցութեան, օրինագիծը գտնում են անընդունելի և ձայն են տալու յօդուածային ընթերցման դէմ, սակայն անպայման բացասաբար վերաբերվելով և ոչ մի յոյս չունենալով նախագծի բարելաւութեան վրա՝ մասնակցում են յօդուածային քննութեան, որպէսզի այսուհետև ևս պարզեն քաղաքական մտքի լիակատար սնանկութիւնը, որպէսզի ցոյց տան, թէ որ աստիճանի մեծամասնութիւնը աւելի պատրաստակամ է դուրս գալ, քան կարող է օգուտ բերել հայրենիքին (ծափեր ձախից)։

Լեախնեցկին յայտնում է, որ աշխատաւորականները ձայն են տալու յօդուածային ընթերցմանը անցնելուն դէմ և, չը ցանկանալով մասնակցել Ֆինլանդիայի դէմ գործվող ոճրագործութեանը, չեն մասնակցի յօդուածային ընթերցման մէջ։

Ֆավօրսկին հնարաւոր չէ գտնում ստորագրել ում էլ որ լինի սահմանադրութիւնը խախտելու տակ։

Բազիլեվիչը կարծում է, թէ ամօթ է ռուս գիւղացիներին ձայն տալ նախագծի դէմ, որ ձգտում է հաւասարեցնել ֆինլանդացիների իրաւունքները ռուսների հետ։

Ֆոմկինը նացիոնալիստ-գիւղացիների կողմից, խօսելով յօգուտ նախագծի, յայտնում է, որ ամօթ է ձախակողմեաններին պաշտպանել ֆինլանդացիներին։

Կոմս Ուվարովը ողջունելով Դումայի իրաւունքների ընդլայնումը՝ չէ ցանկանում միևնոյն ժամանակ որևէ առնչութիւն ունենալ դահլիճների հետ, որոնք մահապատժի են ենթարկում մի ամբողջ ժողովրդի։

Մարկով 2-րդը ներկայ նախագծի մէջ տեսնում է ոչ թէ Դումայի իրաւունքների, այլ պարտականութիւնների ընդլայնումն, ոչ թէ Միապետի իրաւունքների սահմանափակումն, այլ հզօրացումն. անկեղծ հաւատարիմ հպատակները պէտք է ձայն տան յօգուտ նախագծի, մնացածները դաւաճաններ են։ (ծափեր աջից)։

Պուրիշկևիչը կարծում է, որ այս պատմական գիշերը ցոյց կը տայ, որ Դումայի լաւագոյն մասը համակիր է ժողովրդական հպարտութեան ու ազգային ինքնաճանաչութեան զգացմունքով կանչէ վերջապէս՝ «Կեցցէ Ինքնակալ Ցարը, կեցցէ Ռուսաստանը. թող նրան ենթարկվեն այլազգիները» (ծափեր աջից)։

Կրուպենսկին հաղորդում է, որ ձախակողմեան գիւղացիները ձայն են տալու նախագծի դէմ։

Գեգեչկորին, կարծելով որ միայն տրամաբանօրէն ամբողջացած քաղաքական ակտը կարող է էֆֆէկտ առաջ բերել և գտնելով որ սօցիալ-դեմօկրատների մասնակցութիւնը յօդուածային ընթերցմանը ոչ մի գործնական նշանակութիւն ունենալ չէ կարող, յայտնում է, որ ներկայ պատմական րօպէին, երբ բռնութիւն է կատարվում ֆինն ժողովրդի վրա, սօցիալ-դեմօկրատները նիստի դահլիճում այլևս անկարող են մնալ։

Սօցիալ-դեմօկրատները հեռանում են։

Գիշերվայ ժ. 1-ին յօդուածային ընթերցման անցնելը ընդունվում է 196 ձայնով ընդդէմ 105։ (Հ. Գ.)

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կովկասի Փոխարքան ի պատասխանի այն հեռագրի, որ ուղարկվեց Թագաւոր Կայսրին պետական բանկի Թիֆլիսի գրասենեակի բացման առիթով, ստացաւ Նորին Մեծութիւնից հետևեալ հեռագիրը. «Փոխարքային Մցխէթ։ Յանձնարարում եմ ձեզ, կոմս, յայտնել Իմ շնորհակալութիւնը Ինձ ամենահպատակ զգացմունքներ արտայայտողներին բոլորին այսօր պետական բանկի գրասենեակի բացման առթիւ. ՆԻԿՈԼԱՅ»։ Փոխարքան ուղարկել էր այս հեռագիրը. «Ցարսկոյէ-Սէլօ. Թագաւոր Կայսրին։ Աղօթելով Ձերդ Կայսերական Մեծութեան թանգագին կենաց համար՝ պետական բանկի Թիֆլիսի գրասենեակի բացման և նրա շինութեան օծման առիթով, գրասենեակի պաշտօնեաները՝ կառավարչի հետ, Կովկասի բարձր իշխանութեան և նահանգի պաշտօնեաները, տեղական ազնուականութեան, քաղաքների, տեղական կովկասեան վաճառականութեան, բօրսային կոմիտէտի, վարկային և այլ հասարակական հաստատութիւնների ներկայացուցիչները դիմեցին ինձ խնդրելով առ ոտս Ձեր Կայսերական Մեծութեան արկանել նրանց ամենահպատակութեան և սիրոյ զգացմունքները և հայրենիքին ու գահին ծառայելու լիուլի պատրաստակամութիւնը։ Բաղդաւոր եմ ամենահպատակօրէն հաղորդել այդ մասին Ձեր Կայսերական Մեծութեան։ Գեն.-ադիւտանտ կոմս Վօրօնցով Դաշկով»։

◆ Մայիսի 25-ին Կովկասի Փոխարքայ Ի. Ի. Վօրօնցով-Դաշկովի ծննդեան օրն էր, որի առիթով կոմսը Ռուսաստանի շատ մասերից, մանաւանդ Կովկասի բազմաթիւ տեղերից ստացաւ շնորհակալական հեռագիրներ։ Ի թիւս այլոց բարեհաճեց շնորհաւորել հեռագրով Մցխէթ Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը, ինչպէս և Թիֆլիսի և Վրաստանի թեմի առաջնորդ Գաբրիէլ արքեպիսկոպոսը և այլն։

◆ Մայիսի 26-ին Թիֆլիսի վաճառական դասը ճաշով պատւեց պետական բանկի կառավարիչ Ա. Կօնշինին, որ արդէն մեկնեց Պետերբուրգ։

◆ Ներկայումս Կովկասի մի քանի շրջաններն են ճանապարհորդում երկրաբանական հետազօտութիւնների նպատակով Լոնդօնից եկած մի խումբ անձեր։

◆ Երէկվանից Թիֆլիսի արհեստաւորաց դպրոցում 3 օրով բացվեց աշակերտական ձեռագործների ցուցահանդէս։

◆ Այսօր Թիֆլիսի հասարակական կլուբում տեղի կունենայ վերջին երեկոյթը։ Գ. Խատիսեան կը կարդայ ռեֆերատ «Անգլիական սահմանադրութեան պատմութեան ներկայ րօպէն» (վերին պալատի ճգնաժամը)։ Ռեֆերատի ընթերցման և զրոյցի միջև կը կայանայ կլուբի անդամների արտակարգ ժողովը՝ շինութեան հարցի մասին խորհրդակցելու համար։

◆ Չորեքշաբթի, մայիսի 26-ին, Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան մէջ զեկուցումներ կարդացին Ս. Էյրամեան, Ա. Քալանթար և Ե. Կանչէր։ Առաջինը պարզեց այն ծրագրի էութիւնը, որ մշակվել է խոտաբոյսերի փորձերի համար մեր երկրում։ Երկրորդը զեկուցեց այն հերթական խնդիրների մասին, որոնցով պէտք է զբաղվի Ընկերութեան կից բացված կենդանաբանական բիւրօն։ Երրորդը բացատրեց երկրագործական մեքենաների փորձելու նշանակութիւնը։

◆ Մայիսի 25-ին, Վերին-Ագուլիսում վախճանվեց երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ Յովհաննեան-Մարիամեան դպրոցի ուսուցիչ Ռուբէն Մելիք-Մուսայեանը։ Նա տառապում էր «սարգօմա» կոչված հիւանդութեամբ, որից բժշկվելու համար մի տարի առաջ գնաց Լօզան՝ հռչակաւոր պրօֆեսօր Ռուի մօտ, որ կտրեց ամբողջ ոտքը։ Վերադառնալով, նա վերսկսեց իր պաշտօնը Յովհաննեան դպրոցում և մինչև այս տարվայ յունվար ամիսը պարապում էր, բայց հիւանդութիւնը վերսկսվելով ստիպվեց թողնել ուսուցչութիւնը և գնաց իր հայրենիք, ուր և վախճանվեց։ Հանգուցեալը թէև ամուսնացած չէր, բայց ունէր ծնողներ, քոյրեր և եղբայր, որոնց պահպանում էր իր աշխատանքով։ Իր ընկերների շրջանում յայտնի էր իբրև ազնիւ մարդ և հմուտ ուսուցիչ և վայելում էր համակրութիւն։ Այսօր, Զգրաշէնի եկեղեցում, նշանակված է հոգեհանգիստ Յովհաննեան դպրոցի վարչութեան և ուսուցչական խմբի կողմից։

◆ Լոյս մայիսի 28-ի գիշերը, ժ. 12 ին, Թիֆլիսում յորդ անձրևի հետ տեղաց խոշոր կարկուտ, որ առանձնապէս մեծ քանակութեամբ էր Միքայէլեան փողոցի վրա։

◆ Այսօր, երեկոյեան ժամը 7-ին, Հայոց Բարեգ. Ընկերութեան դահլիճում նշանակված է Հայոց Դրամատիկական Ընկերութեան ընդհանուր ժողովը՝ վարչութեան երկու անդամի և երեք փոխ-անդամի ընտրութեան համար։

◆ Թիֆլիսի ոստիկանապետի հետ համաձայնութիւն կապելով քաղաքային վարչութիւնը կիրակի և լի օրերի առևտուրը Սօլդատսկի բազարից և նրա մօտակայքից փոխադրել է Ներսիսեան դպրոցապատկան «շուկան»։ Շինական մթերքատէրերին տեղեր կը յատկացվեն ձրիաբար, իսկ միւս առևտրականներին ձրի տեղեր կը տրվեն միայն լի օրերը։

◆ Օրուջ Օրուջեվը Բագւում հրատարակելու է թուրքերէն մի հասարակական և քաղաքական օրաթերթ «Գիւնաշ» (Արև) անունով։

◆ Ընթացք է տրվում Բագւում պարտադիր ընդհանուր ուսում մտցնելու խնդրին։

◆ Գանձակի կողմից Ներսիսեան դպրոցի հոգաբարձական պատուիրակ է ընտրվել բժ. Շահպարոնեանի հետ նաև Ս. Բալաղեան։

◆ Բագուից Դր. ա. ք. Գրիգորեանը մեզ խնդրում է տպել հետևեալը. «Բիչ անց՝ լոյս կը տեսնէ «Սոխակ Հայաստանին», կը դայլայլէ, կը գեղգեղէ հայրենիքը, սրբազան հայրենիքը և կաւետէ հայոց գարունը»։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Ոստիկանութիւնը ձերբակալեց գնդապետի կին Մարֆա Էրֆօրտին, որ պարապում էր զանազան մութ գործերով։

◆ Մայիսի 26-ին էլէկտրաքարշի վագօնում նստած ժամանակ պաշտօնաթող գնդապետ Վիկտոր Սերեդակովսկու վրայից անյայտ անձեր գողացել են 120 րուբլիանոց ոսկէ ժամացոյցը և 15 րուբլի արժէող շղթան։

◆ Մայիսի 25-ին Աւճալեան փողոցում № 103 տան առաջից բարձրացրել են 5—6 ամսական նորածին արու երեխայ։

◆ Մայիսի 26-ին ինքնասպանութեան փորձ կատարեց Աննա Պլիշենկօն, որ ընդունեց նաշատըրի սպիրտ։ Հիւանդանոցում բժիշկը փրկեց նրա կեանքը։

◆ Մայիսի 26-ին ոստիկանութիւնը և զինուոր-պահակները շուրջկալի ժամանակ ձերբակալեցին 20 անգործ մարդու 5-րդ քաղաքամասում, 10 հոգու 9-րդ քաղաքամասում։ Մայիսի 27-ին 9-րդ քաղաքամասում ձերբակալվեցին 69 հոգի, 2-րդ քաղաքամասում—16 հոգի։

◆ Մայիսի 27-ի երեկ. ժ. 5-ին Բոտիշչեվսկայա փողոցում, անցնելու ժամանակ, վայր ընկաւ և մեռաւ թիւրքահպատակ Իսմայիլ Հաջի Միր-Ալի-օղլին, 32 տարեկան։

◆ Մայիսի 27-ին Կուր գետում լողանալու ժամանակ խեղդվեց 16 տարեկան Իօվ Բրօձէյին։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Հ. Զուդերմանի «Թիթեռնիկների կռիւը», որ ներկայացվեց ամսիս 27-ին Զուբալովի անուան ժողովրդական թատրոնում, չունեցաւ սպասած աջողութիւնը։

Չը նայած նրան, որ խաղացողների կազմի մէջ աւելի շատ դերասաններ էին քան սիրողներ, բայց և այնպէս ներկայացումը ընդհանուր առմամբ, եթէ ոչ թոյլ, գոնէ բաւարար անցաւ։

Դերակատարներից առանձին ուշադրութեան են արժանի՝ Սեւումեանը—Կեսլերի, տ. Զաբէլը—Գերգինայհէյմի և տ. Գուլազեանը—Էլզայի դերերում։

Իսկ տ. Աւետեան-Նազարէթեանը, որ այդ գիշերվայ հերոսուհին էր, կարողացաւ պատւով դուրս գալ իրան սահմանած պաշտօնից։ Նրա խաղացած Ռօզիկը, կարելի է ասել, որ Զուդերմանի իսկական Ռօզիկն էր, իր հոգեկան ամենանուրբ ելևէջներով։ Աւելին սպասել նրանից մենք չէինք կարող։

Միրզօյեանի Վինկելմանը—տիպիկ էր։

Միւսները թոյլ էին։

Թատրոնը կիսով չափ դատարկ էր։

Մարտօ

—

Աշտարակ, 18 մայիսի

Մայիսի 15-ին դերասան Աբրահամեանը, սիրողների մասնակցութեամբ, Աշտարակի ծխ. դպրոցի դահլիճում խաղաց «Երկու յիմնապետ» պիէսան։ Խաղը անցաւ բաւարար։ Աւելի լաւ կը լինէր՝ եթէ չը լինէին մի քանի տեխնիկական պակասութիւնները։

Մուտքը մօտ 50 ր. էր, որից 14 ր. 90 կ. յատկացվեց տեղիս ծխ. դպրոցին։

Յետոյ խաղացին ռուսերէն լեզուով Չեխովի «Предложеніе» պիէսան։

Այդ պիէսն ևս անցաւ սահուն։ Բաւականաչափ հասարակութիւն կար բոլոր խաւերից։

Լևոն

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Պ. Արաքսեան, «Ժողովրդական թատրոն», ժողովածու երկրորդ. հրատարակութիւն Գ. Գալստեանի, Թիֆլիս 1910 թ. գինն է 1 րուբ.։

Ներկայ գրքոյկի մէջ զետեղված են 6 պիէս մի-մի գործողութեամբ։ Դրանք զաւեշտական գրուածքներ են, վերցված ռուսական և եւրոպական ռեպերտուարից։

Թարգմանիչ Պ. Արաքսեանը յիշատակել է միայն առաջին պիէսի հեղինակի անունը, միւսներինը մոռացել է նշանակելու։

«Պիէսներն են՝ «Գող», «Պաշտօնս է խամփալը», «Զօքանչի գալուստը», «Կրեչինսկի խելքով», «Սիրահարված մայոր» և «Արևան դէպք»։

Թարգմանական լեզուն ընդհանրապէս վատ չէ, բայց կան և անպատեհութիւններ բաւական մեծ թւով և տպագրական տառասխալներ։ Օտարոտի են, օրինակ, այնպիսի նախադասութիւններ, ինչպէս «երկուշուաք էլ սարչում են» (երես 3), «ինչպէս եմ կարօտացել նրան (31), խրովել» և այլն։

Նպատակայարմար կը լինէր նշանակել նաև պիէսների ռուսերէն այն անունները, որոնցով նրանք պաշտօնապէս թոյլատրված են ներկայացնելու համար բեմի վրա, որպէսզի գաւառներում չը դժուարանան թոյլտուութիւն ձեռք բերելու։

Գինը թանգ է։ Նա ունի փոքրադիր 147 երես և արժէ 1 րուբլի։

Յամենայն դէպս՝ պիէսներ հրատարակելու գաղափարը ինքն ըստ ինքեան լաւ է և մեր գաւառական թատերասէրները այժմ հնարաւորութիւն են տեսնում ունենալ տպագրված պիէսներ և չը դիմել արտագրութիւնների, ինչպէս մինչև այժմ այդ արվում էր։

Ա. Բ.

ՄԱՄՈՒԼ

Վերջերս, ինչպէս յայտնի է, Պետական Դուման նուիրագործեց ազգայնական կուրիաների սկզբունքը Արևմտեան երկրում զէմստվօ մտցնելու օրինագիծը քննելիս։ Այդ առիթով „Рус. Вѣдомости" թերթը գրում է.

Բոլոր նախազգուշացումները, բոլոր ցուցմունքները այն մասին, թէ ազգայնական կուրիաներ ստեղծելով (այսինքն սահմանելով որ ամեն մի ազգութիւն իր պատգամաւորներն ունենայ) մտցվում է միայն ազգայնական ատելութեան և քայքայման սկզբունք, անզօր եղան կառավարչական ուլտիմատումի առաջ։ Բազմաչարչար Արևմտեան երկրի ապագայ պատմագիրը կը կարողանայ աւելի լիակատար և աւելի օբեկտիվօրէն սահմանել ռուսական օրէնսդիր ժողովի անդամների պատասխանատուութիւնը, որոնք ստորագրեցին այդ ատելութեան և այդ քայքայման գործը հէնց այն րօպէին, երբ նրանք կարող էին երկրի կուլտուրական վերածնութեան և խաղաղացման հիմքը դնել։ Յամենայն դէպս նրանց մեծագոյն մասի համար չէ կարելի նոյնիսկ մեղմացուցիչ խօսքեր գործածել՝ չը գիտեն, ինչ են գործում։ Նրանք շատ լաւ գիտէին, թէ յանուն ինչի նրանց առաջարկվում է անցնել ամենատարրական արդաբութեան սահմանը:

Եւ նրանք անցան:

Լրագիրն եզրակացնում է, որ ռուսական ժողովրդական բարոյական արժանապատուութեանը մեծ հարուած հասցվեց:

*

Ինչպէս գիտենք, ֆինլանդական հարցի մասին եւրոպական մի քանի պարլամենտական և հասարակական գործիչներ և հաստատութիւններ բողոքեցին ռուսաց պետական Դումային և իրանց բողոքներով գրգռեցին դժգոհութիւն ռուսական աջակողմեան մամուլի և հասարակութեան մէջ:

Սակայն Ֆրանսիան չէզոք մնաց և լուռ: Այդ առիթով «Утро» թերթը գրում է.

Ռուս-ֆինլանդական կոնֆլիկտը դառնում է ժամանակակից մարդկութեան խղճմտանքի հարց, նոյնպիսի հարց, ինչպէս մի ժամանակ էր անգլո-բուէրական կոնֆլիկտը: Մարդկանց համակրութիւնը թեքվում է տկարագոյնի կողմը, նրա կողմը, ով իր ուժն ենթադրում է իր արդարացիութեան մէջ, ընդդէմ հզօրագոյնի, որ իր իրաւունքը հիմնում է իր ուժի վրա: Ռուսաց պետական մարդկանց դիմում են կամ խորհրդով, կամ նախազգուշացմամբ ոչ միայն պրոֆեսորներ, այլ և պատգամաւորներն այնպիսի չափաւոր պարլամենտների, ինչպէս են անգլիականը, բելգիական և գերմանականը: Զարմացնում է վերջինների մէջ ֆրանսիացիների բացակայութիւնը:

Ի՞նչ է պատճառը:

Ֆինլանդական մի գործիչ բացատրել է նրանով, որ Ֆրանսիայում աւելի քիչ են հետաքրքրվում ֆինլանդական հարցերով, քան Անգլիայում և Գերմանիայում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 19 մայիսի

Վերջանում է ուսումնական տարին Թաւրիզի կենտրոնական ուսումնարանի, Ղալայի Արամեան և ս. Աննայեան, և Լիլավայի Թամարեան և Հայկազեան ծխական երկսեռ դպրոցների համար: Անշուշտ շուտով ներկայ կը լինենք վերոյիշեալ ուսումնարանների ուսումնական հաշւետուութեանց և կը յայտնենք արդիւնքը «Մշակին»: Մասնաւորելով խօսքը վերջին երկու թաղերի ծխական ուսումնարանների մասին, սպասում ենք, որ երկթաղի հոգաբարձութիւնները՝ ուսումնական հաշւետուութեան հետ զուգընթաց ծանօթացնեն նաև հասարակութեան ուսումնարանների նիւթական հաշւետուութեան հետ. մանաւանդ Լիլավայի ուսումնարանների հոգաբարձութիւնը պէտք է շտապէ այդ անել՝ վերջ դնելու համար այլընդայլոյ տարաձայնութիւնների: Հասարակութեան խաւերում ասում են, որ Լիլավայի ուսումնարանի անձեռնմխելի գումարներն սպառվել են արդէն և կարող է պատահել, որ նրանք փակվելու վտանգին ենթարկվեն մօտիկ ապագայում:

Իւրաքանչիւր հասարակական հաստատութիւն պարտական է տարէ-տարի հաշիւ տալ հասարակութեան, որպէսզի հասարակութիւնը մօտիկից ծրագել լինի իր մանուկների կրթութեան գործին, և ի հարկին դարման մտածէ իր որդոց կրթական հիմնարկութիւնների համար: Այդ միևնոյն բանն է ասել ու քարոզել մամուլը. միևնոյնն է պահանջել հասարակական կարծիքը և մաքուր գործիչների կոչումը: Մեր կարծիքով՝ ամենանպատակայարմար բանն այն է, որ երկու թաղի հոգաբարձուները ուսումնարանների դրամական ամբողջ հաշիւները տպագրել տան ու ցրեն հասարակութեան մէջ, որով ամեն մարդու համար բացորոշ կը լինի կրթական հաստատութիւնների լաւ կամ յոռի դրութիւնը: Սպասում ենք:

Հայկազուն

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

26 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Դոնեան Զօրաց շրջանը և Կերչի քաղաքապետութիւնը խոլերայից ըսպառնական են ճանաչված:

ՄԻՆՍԿ: Այրվում է Բօրիսօվ քաղաքը: Հրդեհը լափել է 12,000 պուդ բամբակ: Վնասները խոշոր են:

ԿԻԵՎ: Դնեպր գետը թունաւորված է խոլերայի վիբրիոններով:

ՕԴԵՍՍԱ: Եկաւ սենատոր Դեդիւլինը:

ԿԻԵՎ: Պոլիտեխնիկումի 45 ուսանողներ պրոֆ. Պիսարժեվսկիի առաջնորդութեամբ մայիսի 31-ին մեկնում են էկսկուրսիայով Թիւրքիա, Պաղէստին, Եգիպտոս:

ԲՈՒԴԱՊԵՇՏ: Թռիչքի ժամանակ վայր ընկաւ Եֆիմօվը, որ ծանր ջարդուածքներ ստացաւ: Դրութիւնը աստիճանաբար լաւանում է:

ՍՏՕԿՀՕԼՄ: Ռուսաստանը, Շվեդիան և Նորվեգիան, որոնք անհամեմատ աւելի են շահագրգռված Շպիցբերգենի հարցում, միասին որոշեցին մշակել կօնվենցիայի նախագիծ Շպիցբերգենի իրաւական դրութիւնը որոշելու համար: Այդ նպատակով մօտիկ ապագայում բանակցութիւններ են սկսվելու Խրիստիանիայում:

ԲՐԻՒՍՍԷԼ: Կայացաւ բամբակագործութեան 7-րդ միջազգային կօնգրէսի վերջին նիստը: Որոշվեց խնդրել ազգային կօմիտէտներին աջակցել բամբակի մշակութեան զանազան գաղութներում, մանաւանդ Հնդկաստանում:

ՌԻԳԱ: Բացվեց Շուրջբալտեան երկրի ժուռնալիստների 2-րդ համագումարը փակված «Բօրգա» լրագրի հրատարակչի նախագահութեամբ:

27 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Կրասնօէ Սելօյում ձերբակալվեց «Կաֆալ և Գանդէլման» ընկ. դրամատար Բուտուզօվը: Նրանից խլվեց 40,680 ռուբլի:

ՕԴԵՍՍԱ: Կալանաւորվեցին կեղծ վկայականներ պատրաստողներ, որոնց մէջ են մի քանի ուսանողներ:

ՀԷԼՍԻՆԳՖՕՐՍ: Պետերբուրգից ստացված կարգադրութեան համաձայն ձերբակալվեցին ութ մարդ Հէլսինգֆօրսում, 9 մարդ Վըբօրգում. բոլորն էլ ֆինլանդական ծագում չունեն:

ՆԻԺՆԻ-ՏԱԳԻԼ: Ձերբակալված չորս օսերը խոստովանեցին, որ իրանք կողոպտեցին Ալապաևի գործարանի հաշւապահին: Փողերը գտնվել են, պակասում է 3,000 ռ.:

ՊԼՕՑԿ: Բէլսկից 12 վերստ հեռաւորութեան վրա կողոպտվեց Րիպին գնացող պօստը: Կողոպտիչները յափշտակեցին 55,595 ռուբլի: Բոլոր պահակները սպանվեցին:

ՄԻՆՍԿ: Բօրիսօվի հրդեհը դադարեց: Կրակը ոչնչացրեց քաղաքի գեղեցիկ մասը, 450-ից աւելի տներ. կառավարական հաստատութիւնները զերծ մնացին: Կազմվեց հրկիզեալներին օգնող մասնաժողով: Վնասները շատ մեծ են:

ՊԱՐԻԶ: Առ. ժ. 4 և 40 րօպէին մի աէրօպլան 2 օֆիցէրներով բարձրացաւ Շալօնեան բանակատեղում և ժ. 7 և 10 րօպէին իջաւ Վէնսէնում, անցնելով 170 կիլօմետր տարածութիւն $2^1/_2$ ժամում:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Հրաւէր

Կաթուղիկէ ս. Աստուածածնի (Մէյդանի ս. Գէորգ) եկեղեցում ամսիս 23-ին նշանակված առաջին ժողովը չը կայանալով՝ նշանակված է ծխական երկրորդ ժողով ընտրելու 2 ներկայացուցիչ (պատգամաւոր) և 2 անձնափոխանորդ (կանդիդատ) Ներսիսեան Հոգևոր Դպրոցի համար հոգաբարձուներ և Թեմական խորհրդի անդամներ ընտրելու: Ուստի սրանով հրաւիրում եմ յիշեալ եկեղեցու մեծ. պ. պ. ծխականներին շնորհ բերել եկեղեցի մայիսի 30-ին, կիրակի օրը, առ. 12 ժամին ընտրութեանը մասնակցելու:

Երկրորդ ժողովը համարվում է օրինաւոր՝ որքան և պակաս լինի ժողովականների թիւը (Կան. յօդ. 5):

Ստեփաննոս աւ.-քահ. Սամուէլեանց

(ա. օ.) 642. 2—1

Հրաւէր

Սրանով յայտնում եմ Շամքօրեցոց ս. Աստուածածնի եկեղեցու պ. պ. ծխականներին, որ մայիսի 30-ին, կիրակի, առաւօտեան ժամը $11^1/_2$-ին շնորհ բերեն նոյն եկեղեցու ծխական ուսումնարանի դահլիճը ընտրելու 2 պատուիրակ և 2 կանդիդատ, որոնք իր ժամանակին մասնակցելու են Ներսիսեան հոգևոր դպրոցի հոգաբարձուների ընտրութեանը:

Կը քննվեն նաև եկեղեցու և դպրոցի վերաբերեալ մի քանի հարցեր:

Համազասպ ա.-ք. Տէր-Յովհաննիսեան

647. 1—1

Հրաւէր

Կիրակի, մայիսի 30-ին, առաւօտեան ժամը 12-ին, Էջմիածնեցոց ս. Գէորգ եկեղեցու ծխականները հրաւիրվում են երկրորդ և վերջին ժողովի՝ ընտրելու 2 պատգամաւոր և 2 անձնափոխանորդ, որոնք մասնակցելու են Ներսիսեան դպրոցի հոգաբարձական ու թեմական խորհրդի անդամների ընտրութիւններին: Ժողովին իրաւունք ունեն մասնակցելու 25 տարեկանից բարձր հասակ ունեցող ծխականներ:

Բարսեղ ք. Տէր-Բարսեղեան

(ա. օ.) 648. 2—1

ՀՐԱՒԷՐ

Ամսիս 30-ին, կիրակի, ժամը 12-ին ս. պատարագից յետոյ Նորաշէնի ս. Աստուածածնի եկեղեցում նշանակված է երկրորդ և վերջին ծխական ժողով, որը պէտք է ընտրէ 2 պատգամաւոր և 2 անձնափոխանորդ՝ Ներսիսեան Ազգային Հոգևոր Դպրոցի հոգաբարձուներ և Թեմական խորհրդի անդամներ ընտրելու համար:

Ուստի կրկին անգամ հրաւիրում եմ յիշեալ եկեղեցու մեծ. ծխականներին շնորհ բերել եկեղեցի յիշեալ ժամին:

Սարգիս աւագ-ք. Տիօյեանց

(ա. օ.) 651. 2—1

ОРУЖЕЙНАЯ
ФАБРИКА въ Ижевскомъ заводѣ,
Вятской губ.
А. Н. ЕВДОКИМОВА.
вырабатываетъ ружья шомпол. и централ. отъ 3 до 500 р.
Въ огромномъ выборѣ центральные ружья и револьверы, лучшихъ заграничн. заводовъ.
Ремонтъ и передѣлка всѣхъ системъ ружей.
ПРЕЙСЪ-КУРАНТЪ БЕЗПЛАТНО.

(П. 63725) 638. 1—1

Հրաւէր

Ըստ շրջաբերականի Թեմակալ առաջնորդի Հայոց Վրաստանի և Իմերէթի, մայիսի 30-ին, առաւօտեան ժամը 12-ին, ս. Նշան եկեղեցում նշանակված է երկրորդ եւ վերջին ժողով՝ ընտրելու 2 ներկայացուցիչ (պատգամաւոր) և 2 անձնափոխանորդ (կանդիդատ), մասնակցելու Ներսիսեան հոգևոր դպրոցի համար հոգաբարձուներ ընտրող պատգամաւորների ժողովում: Յիշեալ պատգամաւորները ընտրելու են և Թեմական խորհրդի անդամներ: Պատգամաւորների ընտրութիւնից յետոյ անմիջապէս լինելու է և ընտրութիւն երէցփոխի, որի պաշտօնավարութեան ժամանակամիջոցն արդէն լրացած է:

Միաբան ս. Նշան եկեղեցու՝
Գրիգոր ք. Շերմազանեան:

621. 1—1

ՀՐԱՒԷՐ

Սուրբ Կարապետ եկեղեցու ծխականները երկրորդ և վերջին անգամ հրաւիրվում են նոյն եկեղեցի ամսիս 30-ին, կիրակի, առաւօտեան ժամը 11-ին, երկու պատուիրակ և երկու անձնափոխանորդ ընտրելու Ներսիսեան Հոգևոր Դպրոցի վեց հոգաբարձուների և Թեմական խորհրդի անդամների ընտրութեանը մասնակցելու:

Գաբրիէլ աւագ ք. Տէր-Գաբրիէլեանց

622. 1—1

Հրաւէր

Թեմիս սրբազան առաջնորդի առաջադրութեան համաձայն, սոյն մայիսի 30-ին, առաւօտեան ժամը 12-ին, Ջուղուրէթի ս. Աստուածածին եկեղեցու ծխական այր մարդիկ՝ 25 տարեկանից աւելի՝ հրաւիրվում են երկրորդ և վերջին անգամ նոյն եկեղեցին՝ ընտրելու իրանց միջից երկու ներկայացուցիչ (պատգամաւոր) և երկու անձնափոխանորդ (կանդիդատ), որոնք մասնակցելու են Ներսիսեան ազգային հոգևոր դպրոցի համար հոգաբարձուներ ընտրելու ժողովին:

Ծխատէր՝ Յովհաննէս ք. Իզըրաշեանց

637. 1—1

Հրաւէր

Ամսիս 30-ին Կուկիայի Նորաշէն ս. Աստուածածնի եկեղեցում առ. ժամը 12-ին լինելու է ծխ. ընդհանուր երկրորդ և վերջին ժողով՝ որ ընտրելու է Ներսիսեան Հայոց Հոգևոր Դպրոցի համար երկու պատուիրակ և երկու կանդիդատ համաձայն Թեմիս բարձր սրբազանի առաջադրութեան

Ուստի խնդրում եմ շնորհ բերել մեր յարգոյ ծխականներին որոշեալ ժամին:

Աղէքսանդր ք. Տէր-Յովհաննիսեան

641. 1—1

Հրաւէր

Կիրակի, մայիսի 30-ին, առաւօտեան ժամը $11^1/_2$-ին, Ջգրաշէնի ս. Աւետեաց եկեղեցում նշանակված է ծխական ընդհանուր ժողով:

Օրակարգ.

1) Երկու պատուիրակների ընտրութիւն:
2) Ընթացիկ մի քանի կարևոր խնդիրներ:

Ժողովը երկրորդ անգամ լինելով օրինաւոր կը համարվի, որքան ծխականներ լինեն. ուստի խնդրվում է ձայնատու ծխականներին շնորհ բերել այդ ժողովին: Առանձին հրաւիրաթղթեր չեն ուղարկվելու:

Աւագ-քահանայ՝ Գ. Աբուլեան

(ա. օ.) 644. 2—1

Հրաւէր

Համաձայն վիճակաւոր առաջնորդի կարգադրութեան, առաջիկայ կիրակի, մայիսի 30-ին, ս. պատարագից յետոյ, ժամը 12-ին, Մողնու ս. Գէորգ եկեղեցում նշանակված է ծխականների ընդհանուր ժողով՝ ընտրելու համար երկու պատուիրակներ և երկու փոխանորդներ, որոնք պէտք է կատարեն Ներսիսեան դպրոցի 6 հոգաբարձուների և Թեմական խորհրդի անդամների ընտրութիւնը Թեմի միւս պատուիրակների հետ: Նոյն ժողովում կը լինի նաև երէցփոխի ընտրութիւն: Ժողովը, իբրև երկրորդ, կը համարվի օրինական՝ որքան էլ լինի ժողովականների թիւը:

Աւագ-երէց Մողնու եկեղեցու՝
Սիմէօն ա.-ք. Զմշկեանց

(ա. օ.) 635. 2—1

ԻՆՔՆՈՒՐՈՅՆ ԱՊՐՈՒՍՏ
ԿԱՄ
ԿՈՂՄՆԱԿԻ ԵԿԱՄՈՒՏ

Իւրաքանչիւր տան մէջ գտնվող անհրաժեշտ և արդիւնաբեր առարկայ հեշտ և հասարակ պատրաստելու միջոցով, սպառելով շատ աննշան գումար: Առանձին գիտութիւն և մեծ շինութիւն չէ պահանջվում: Պատկերազարդ նախագիծը՝ № 4 և պայմանները ՁՐԻ: Հասցէն՝ И. Я. МАРКЪ. Либава, Курл. губ.

(շ.) (В. 53687) 529. 6—3

Լոյս տեսաւ Մոսկվայում

Ա. ԿՈՍՏԱՆԵԱՆԻ հրատարակութեամբ հետևեալ հայկական երգերը եւրոպական նօտաներով.

1) «ԿՌՈՒՆԿ» (երկրորդ հրատար.)
2) «ԼՈՒՑ» (Ա. Ալյանեանի ձայնագրած)
3) «ՊԱՂ ԱՂԲԻՒՐԻ ՄՕՏ և ԼՈՒՐԻԿ»

Վաճառվում են.

1) Մոսկվա—Бессель и К-о, Петровка 12.
2) Թիֆլիս—Սուսանաճեանի մօտ:
3) Բագու—Իւնդրժիչեկի մօտ:

(Հ. շ.) 573. 4—4

КРЕМЪ
НЕЛЛИ
NELLY'S CREAM.

Англійская аристократія предпочитаетъ всѣмъ другимъ средствамъ именно „Кремъ Нелли", какъ лучшее для смягченія кожи лица, рукъ и бюста. Въ Лондонѣ расходится до 1.000.000 бан. ежегодно.

Кремъ Нелли уничтожаетъ всѣ недостатки кожи, загаръ, веснушки, пятна и т. п.

Продажа у Мюръ и Мерилизъ, Гетлингъ, Акц. О-ва К. Эрмансъ и К° и пр., а также во всѣхъ апт. и парфюмерн. магаз. Россіи.

Одной банки достаточно, чтобы убѣдиться въ его поразительномъ дѣйствіи.

Цѣна 1 р. 25 к. и 2 р. 25 к.
Въ провинцію налож. платежемъ на 50 к. дороже.

Для всей Россіи единств. складъ МОСКВА, Пречистенка, Б. Власьевскій пер., д. 3.

(М.130700) 423. 40—7

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ բազմագոյն մեծադիր պատկերը Սանահնի դարաւոր վանքի սրբազան կամարների տակ՝ 3 ռ.:

Նոյն պատկերը «ԱՂԲԻՒՐԻ» դպրոցական աշակերտ բաժանորդների համար ՄԷԿ Ռ., ճանապարհածախսով 1 ռ. 20 կ.:

Տասն օրինակ մի բաժանորդի հասցէով 10 ռ.:

Վերադիր վճարով պատուէրներ առանց կանխավճարի չեն կատարվում և ծախս 30 կ. աւելի է հաշւվում իւրաքանչիւր պատուէրի համար:

Դիմել՝ ТИФЛИСЪ, Контора Редакціи „АГБЮРЪ ТАРАЗЪ".

(շ.) 571. 0—4

Երեքշաբթի, յունիսի 1-ին, երեկոյեան ժամը $7^1/_2$-ին Կովկասի Հայոց Բարեգ. Ընկ. դահլիճում (Արաս-Արաղսկի, № 7), կայանալու է մայիսի 23-ին չը կայացած ժողովի փոխարէն

Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերութեան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Օրակարգի խնդիրն է՝ Ընկերութեան ճիւղեր բանալը Բագւում, Բաթումում, Նոր-Բայազէտում, Ալէքսանդրօպօլում, Ջուղայում և Կովկասի այլ վայրերում ըստ կանոնադրութեան § 43-ի: Անդամավճարը 3 ռ. է: Անդամագրվել կարելի է նիստի օրը դահլիճ մտնելիս:

(ա. օ.) 646. 3—1

Գեղարուեստ

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ-ԵՐԱԺՇՏԱԿԱՆ
Պատկերազարդ հանդէս
Թիֆլիսում
Խմբագրութեամբ ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆԻ

Լոյս են տեսել Ա. Բ. և Գ. գրքերը. խմբագրվում է Դ. գիրքը: Բաժանորդագինն է՝ 10 գիրքը 10 ռ., 5 գիրքը 7 ռ.: Օտար տեղեր իւրաքանչիւր գրքին 25 կոպ. պօստի ծախս:

Հատավաճառ ամեն տեղ 2 ռուբլի:

Լոյս տեսած համարները 3-ը միասին 5 ռուբ.

Խմբագրութեան հասցէն՝ Чавчавадзевская № 20. Օտար տեղերից դիմել՝ Тифлисъ. редакція „Гехарвестъ" կամ почт. ящ. № 133.

Թիֆլիսում կարելի է բաժանորդ գրվել նաև «Գուտտենբերգ» գրախանութում, տիկ. Վարվառէ Միլեանի մօտ (Паскевича № 4) և տիկ. Վարդանեանի Ծաղկոցում (Лермонтов. № 21):

(Կ. Հ. շ.) 607. 3—3

Դեպօ էլեքտր. եւ կերօսինային ճրագների, պաստառների եւ կահ-կարասիքի

Ե. Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆԻ

Թիֆլիս, Դվորցովայա փողոց: Ֆիրման գոյութիւն ունի 1869 թւից:

Անմիջական յարաբերութեան մէջ լինելով ՊԱՍՏԱՌՆԵՐ (обои) արդիւնաբերող առաջնակարգ ֆիրմաների հետ, ունենալով միաժամանակ հառասուն տարվայ փորձառութիւն յատկապէս պաստառներ վաճառելու գործում և լաւապէս իրազեկ լինելով այդ մասը, կարելիութիւն ունենալով ամեն մի դէպքում ՄՐՑԵԼ պաստառներ ունեցող ուրիշ շատ ֆաբրիկանտների եւ պահեստների հետ—առաջարկում ենք ամենալաւագոյն ՊԱՍՏԱՌՆԵՐ իր բոլոր պատկանելիքներով, ամեն տեսակ նորագոյն նկարներով, որոնք կարող են բաւականութիւն տալ թէ իրանց յատկութեան և թէ մրցութիւնից դուրս ունեցած գների կողմից պ. պ. գնողների պահանջներին ու ճաշակին:

Հասարակութեան, հիմնարկութիւնների և ընդհանրապէս օտար քաղաքների պ. պ. պատուիրողների յարմարութեան համար մենք պարբերաբար թողնում ենք նոր ստացված պաստառների նմուշների ալբոմ: Ալբոմներն ուղարկվում են ըստ առաջին պահանջման:

ԴԵՊՕՅԻՆ ԿԻՑ ՄՇՏԱՊԷՍ ՈՒՆԵՆՔ

I. **ՊԱՍՏԱՌՆԵՐ** առաջնակարգ ֆաբրիկաների, ինչպէս արտասահմանեան՝ նոյնպէս և ռուսական, վերջին նորագոյն ամեն ձևի նկարներով:
II. **ՋԱՀԻԵՑՆԵՐՆԵՐ** էլեկտրականութեան համար, Բ է ր կ մ ա ն յայտնի ֆաբրիկայի, թոյլատրված չափերի և կշիռների գլխաւոր պալատի կողմից:
III. **«ՍԻՐԻՈՒՍ» ԼԱՄՊՕՉԿԱՆԵՐ** էլեկտր. համար, որ տ ն տ ե ս ո ւ մ է $70^0/_0$ և որի միակ ներկայացուցիչը համարվում ենք մենք:
IV. **ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԻՒՆ** էլեկտրական արմատուրների և նիւթեղէնների՝ սարքաւորելու համար:
V. **ԿԵՐՕՍԻՆՕ-ԿԱԼԻԼԱՅԻՆ ԼԱՊՏԵՐՆԵՐ** կատարելագործված սիստէմի՝ ինչպէս արտաքին, նոյնպէս և ներքին լուսաւորութեան համար:
VI. **ԽՈՐՉԱՆՈՑ** սպիրտի «ԻՖԱԿ»)
» կէրօսինի «ՉԷՄՊԻՕՆ») ԳԻՐՇՖՕՐՆ յայտնի ֆաբրիկայի:
VII. **ՊԱՀԵՍՏ** վիէննական կահ-կարասիքի:

Ընդունվում են պատուէրներ էլեկտրական գծեր անցկացնելու և էլեկտր. լուսաւորութեան վերաբերեալ սարքաւորումն մտցնելու բնակարաններում, խանութներում, հիմնարկութիւններում, գործարաններում և այլն: ՕՏԱՐ ՔԱՂԱՔՆԵՐԻՑ ՊԱՏՈՒԷՐՆԵՐԸ կատարվում են շտապիւյթ և ճիշդ կերպով:

(Ն. շ.) 540. 5—3

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐ

„ՆԱՐԶԱՆ" „ԷՍՍԵՆՏՈՒԿԻ №20"

Առ. և Ա. Մ.

Պահանջեցէք ամենուրեք!

Բուժիչ ԷՍՍԵՆՏՈՒԿԵԱՆ (աղի-ալկալեան) №№ 4, 4 նոր, 6, 17, 18, 18 բիւվ. 2, 19: ԲԱՏԱԼԻՆԵԱՆ (անփոխարինելի լուծողական): ՍՄԻՐՆՈՎԵԱՆ-ԵՐԿԱԹԱՅԻՆ (պարունակում է մկնդեղ): ԷՍՍԵՆՏՈՒԿԵԱՆ ԼԷՊԵՇԿԱՆԵՐ (վերացնում է տապը): ԷՍՍԵՆՏՈՒԿԵԱՆ ԱՂ (փոխարինում է № 17 ջրին): ՀԵՂՈՒԿ ԱԾԽԱԹԹՈՒ, միանգամայն մաքուր, ստացված Կիսլօվօդսկի «Նարզանից»:

ՋՐԵՐԻ ԵՒ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀԵՍՏԻՆ—ТИФЛИСЪ, Гановская, № 10.

Ածխաթթւի պատուէրների և մանրամասն նկարագրութիւնների ու պրէյս-կուրանտների համար դիմել՝ Пятигорскъ, Управленіе водъ.

(22,23,26,29) (М. 174920) 599. 4—4

Типографія „Экономія" Большая Ванкская № 3.